

Ազդագիր (առևտրի ազդագիր)

ՏԻՏՎՈՍԱԹԵՐԹ

«ԷԼԻՏ – ԳՐՈՒՊ» Փակ Բաժնետիրական Ընկերություն
թողարկողի ֆիրմային անվանումը (անուն, ազգանունը)

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
կազմակերպական - իրավական ձևը

0010, Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Սայաք-Նովա 15 շ., բն 66,

հեռ. (37410) 56-69-22, էլ. փոստ՝ info@elitegroup.am, ինտ. կայքը՝ www.elitegroup.am
գտնվելու վայրը, կապի միջոցները (հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստ և այլն)

արժեթղթերի դասը՝	<u>անվանական, արժեկտրոնային պարտատու</u>
արժեթղթերի ձևը՝	<u>Ոչ փաստաթղթային</u>
արժեթղթերի քանակը՝	<u>131375 հատ</u>
արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝	<u>1000 (մեկ հազար) ՀՀ դրամ</u>

«ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԸ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՉԻ ԿՐՈՒՄ ՍՈՒՅՆ ԱԶԴԱԳՐՈՒՄ ԶԵՏԵՂՎԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՍԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՃՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐ: ԳՐԱՆՅՄԱՆ ՓԱՍՏԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ»:

«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստագնում ենք, որ ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել ազդագրի ամբողջականությունը»:

ստորագրող անձինք՝

<u>Արմեն Սկոյան</u> <small>(անուն, ազգանուն)</small>	<u>գլխավոր տնօրեն</u> <small>(պաշտոն)</small>	<u>(ստորագրություն)</u>	<u>(ամսաթիվ)</u>
<u>Մարինե Ստեփանյան</u> <small>(անուն, ազգանուն)</small>	<u>ֆինանսական տնօրեն</u> <small>(պաշտոն)</small>	<u>(ստորագրություն)</u>	<u>(ամսաթիվ)</u>

Ստորագրությունները վավերացնում են (ստորագրությունները վավերացվում են տնօրենների խորհրդի նախագահի կամ գործադիր տնօրենի, կամ նման իրավասություն ունեցող այլ անձի կողմից)՝

<u>Արմեն Սկոյան</u> <small>(անուն, ազգանուն)</small>	<u>գլխավոր տնօրեն</u> <small>(պաշտոն)</small>	<u>(ստորագրություն)</u>	<u>(ամսաթիվ)</u>
---	--	-------------------------	------------------

Կ.Տ.

Ազդագրում ներառվող տեղեկությունների ցանկը՝ **տես էջ 2:**

Հայտարարագրում ներառված են հետևյալ տեղեկությունները՝

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ.....	3
ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԱՌԵՎՏՐԻՆ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՍՄԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	7
Ընդհանուր տեղեկություններ.....	7
Պարտատոմսերի սեփականատերերի հիմնական իրավունքները.....	7
Պարտատոմսերի գնի վերաբերյալ տեղեկություններ.....	8
Պարտատոմսերից ստացվող եկամուտների վերաբերյալ տեղեկություններ.....	8
Պարտատոմսերի հաշվառմամբ զբաղվող կազմակերպություններ.....	9
ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	10
Ընդհանուր տեղեկություններ.....	10
1. Թողարկողի պատմությունը և զարգացումը.....	10
2. Ֆինանսական և այլ խմբերի վերաբերյալ տեղեկություններ.....	10
3. Թողարկողի առաջիկա իրականացնող անձինք.....	10
4. Փորձագետների մասնագիտական կարծիքը և այլ անձանցից ստացված տեղեկությունները.....	10
5. Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի չափը.....	10
6. Պարտատոմսերով նախատեսված պարտավորությունների երաշխավորողի վերաբերյալ տեղեկություններ.....	11
7. Թողարկողի կողմից թողարկված արժեթղթերի նկատմամբ առկա օպցիոնների վերաբերյալ տեղեկություններ.....	11
Թողարկողի գործունեության վերաբերյալ տեղեկություններ.....	11
1. Ուսկային գործունեություն.....	11
2. Թողարկողի հիմնական գործունեության նկարագիրը.....	11
3. Թողարկողի հիմնական և ոչ հիմնական գործունեության մեջ ներգրավված գույքը.....	13
4. Այն անձանց անվանացանկը, որտեղ թողարկողը, ներառյալ՝ նրա դուստր ընկերությունները, բաժնային արժեթղթերի նշանակալից կամ խոշոր սեփականատեր են.....	16
5. Հարկային արտոնությունները.....	16
6. Դատական և իրավական ընթացակարգը.....	16
7. Փոխկապակցված գործարքների վերաբերյալ տեղեկություններ.....	16
Թողարկողի ֆինանսական վիճակը և գործունեության արդյունքները.....	20
1. Ֆինանսական հաշվետվություններ.....	20
2. Ֆինանսական վիճակի, գործունեության արդյունքների փոփոխությունների վերաբերյալ տեղեկություններ.....	20
3. Ընկերության ֆինանսական գործունեությունը.....	21
Թողարկողի կառավարման մարմինները և կառավարմանը մասնակցող անձինք.....	23
Թողարկողի հետ փոխկապակցված անձինք, թողարկողի սեփականատերերը.....	28
1. Թողարկողի հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ տեղեկություններ.....	28
2. Թողարկողի նշանակալից, բայց ոչ խոշոր սեփականատերերի վերաբերյալ.....	29
Թողարկողի կողմից թողարկված արժեթղթերի վերաբերյալ տեղեկություններ.....	30
ԿԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՎԵՐԻ ՑԱՆԿԸ	97

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Սույն ամփոփաթեթը դիտվում է որպես ազդագրի ներածական համառոտ նկարագրություն:

1) Ընկերության թողարկված պարտատոմսերը անվանական, ոչ փաստաթղթային, արժեկտրոնային, ինվեստիցիոն /ներդրումային/ պարտատոմսեր են և պետք է տեղաբաշխվեն 4 տրանշներով: Ընկերության թողարկված պարտատոմսերի ընդհանուր ծավալը կազմում են 2.000.000.000 (երու միլիարդ) ՀՀ դրամ (2.000.000 հատ, յուրաքանչյուրի անվանական արժեքը 1.000 ՀՀ դրամ):

Սույն ազդագրով առաջարկվում է գրանցել առաջին տրանշով տողաբաշխված 131375 (հարյուր երեսունմեկ հազար երեք հարյուր յոթանասունհինգ) հատ անվանական, ոչ փաստաթղթային, արժեկտրոնային, 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով պարտատոմսեր:

Պարտատոմսերի առաջին տրանշի տեղաբաշխումն սկսվել է 13.02.2008թ.ին և ավարտվել է 12.05.2008թ.-ին:

Պարտատոմսերի դիմաց տոկոսագումարները պետք է հաշվարկվեն 12.02.2009թ.-ին և 12.02.2010թ.-ին, և պետք է վճարվեն նշված օրերից, երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Պարտատոմսի սույն տրանշի մարման օրը 2010 թվականի փետրվարի 12-ն է:

Պարտատոմսերով նախատեսված պարտավորությունների կատարումն ապահովող միջոցներ նախատեսված չեն, քանի որ վերջիններս առանց ապահովման են:

Մեկ պարտատոմսի գինը որոշվում է համաձայն հետևյալ բանաձևի՝

$$P = \frac{N}{\left(1 + R \times \frac{t}{365}\right)} \times \left\{ c \times \sum_{j=1}^n \frac{1}{(1 + R)^{j-1}} + \frac{1}{(1 + R)^{n-1}} \right\}$$

որտեղ՝

P – Պարտատոմսի գինն է,

N – Պարտատոմսի անվանական արժեքն է

R – Պարտատոմսի դիմաց վճարվող տարեկան տոկոսադրույքի բացարձակ արժեքն է,

t – Մինչև տվյալ արժեկտրոնի վճարումը մնացած օրերի քանակն է,

c – տարեկան վճարվող արժեկտրոնային տոկոսադրույքն է,

n - արժեկտրոնի վճարումների քանակն է,

j – արժեկտրոնի տվյալ հերթական համարն է, որը փոխվում է տվյալ պահից մինչև վերջնական մարումը մնացած արժեկտրոնների վճարումների քանակից կադված:

Ընկերությունը պարտատոմսերի դիմաց վճարվող արժեկտրոնը հաշվարկում է հետևյալ բանաձևով:

$$A = \frac{N \times c}{100}$$

որտեղ՝

A – յուրաքանչյուր տարի վճարվող արժեկտրոնի չափն է,

N – Պարտատոմսի անվանական արժեքն է,

c – տարեկան վճարվող արժեկտրոնային տոկոսադրույքն է:

Պարտատոմսերի առաջին տրանշի տարեկան վճարվող արժեկտրոնի տոկոսադրույքը (c) 10.5% է:

Պարտատոմսերի նկատմամբ որևէ սահմանափակում թողարկողի կանոնադրությամբ կամ պարտատոմսերի թողարկման մասին որոշմամբ սահմանված չէ:

Որպես Ընկերության պարտատոմսերի տեղաբաշխող հանդես է եկել «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերությունը (Բրոքերային գործունեության լիցենզիա ԲԳ-0062 և Հավատարմագրային կառավարման գործունեության լիցենզիա ՀԿԳ 0063)՝ հասցեն ՀՀ, ք. Երևան, Գրիգոր Լուսավորիչ 15/1, հեռ (37410) 50-15-26, 50-15-27: Ներկայումս «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերությունը

վերագրանցվել և վերալիցենզավորվել է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից և գործում է ՀՀ, ք. Երևան 0002, Ամիրյան փողոց 27, գրասենյակ 14 հասցեում, Ներդրումային ծառայությունների մատուցում համաձայն ՆԸ 6 լիցենզիայի հիման վրա՝ տրված ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

Պարտատոմսերում ներդրումը կապված է որոշակի ռիսկերի հետ: Պոտենցիալ ներդրողը, մինչև պարտատոմսերում ներդրում կատարելու մասին որոշում ընդունելը, պետք է շրջահայաց լինի և հաշվի առնի սույն ազդագրում բերված ռիսկերը ու ներառված այլ տեղեկատվությունը: Ազդագրում բացահայտված ռիսկերը կամ դրանց մի մասը կարող են բացասաբար անդրադառնալ պարտատոմսերի առուվաճառքի գների վրա, և որպես արդյունք՝ հանգեցնել նրան, որ ներդրողը կարող է կորցնել ներդրված գումարը կամ դրա մի մասը:

Պոտենցիալ ներդրողը պետք է գիտակցի, որ Թողարկողը բացահայտել է միայն այն ռիսկերը, որոնք նա համարել է էական: Ենթադրաբար կարող են լինել լրացուցիչ ռիսկեր, որոնք թողարկողն այժմ չի համարում էական կամ, որոնք ներկայումս հայտնի չեն, և ցանկացած այդպիսի ռիսկ կարող է թողնել վերևում նշված ազդեցությունն ու հետևանքը:

Պարտատոմսերի հետ կապված ռիսկեր: Հայաստանի ֆինանսական շուկայում առկա տոկոսադրույքների տատանումը կարող է բացասաբար ազդել պարտատոմսերի եկամտաբերության և իրացվելության ցուցանիշների վրա:

Թողարկողի գործունեության հետ կապված ռիսկեր: Հայաստանի մակրոտնտեսական իրավիճակի և շինարարության շուկայի փոփոխությունները կարող են ազդել թողարկողի իրացման ծավալների վրա:

Ընկերության գործունեության վրա կարող է բացասաբար անդրադառնալ նաև անշարժ գույքի գների կտրուկ անկումը, ինչը սակայն՝ ելնելով վերջին տարիների անշարժ գույքի գների տեմդենցներից՝ մեր կարծիքով քիչ հավանական է:

Տարերային խոշոր աղետները նույնպես կարող է բացասական ազդեցություն ունենալ Ընկերության բնականոն գործունեության, հետևաբար ընկերության ֆինանսական ցուցանիշների վրա:

Ընկերության պարտատոմսերից ստացվող եկամուտը ենթակա է հարկման ըստ հետևյալ հարկատեսակների՝

1. Շահութահարկ
2. Եկամտահարկ

Պարտատոմսեր ձեռք բերող անձը պարտավոր է Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայում բացել անձնական հաշիվ՝ վերջինիս կողմից սահմանված կանոններին համաձայն:

Երկրորդային շուկայում պարտատոմսեր ձեռք բերող կամ օտարող անձը պարտավոր է իր հաշվին կատարել Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի կամ Հայաստանի ֆոնդային բորսայի կողմից սահմանված պարտադիր վճարները՝ կապված սեփականության իրավունքի գրանցման կամ գործարքների ձևակերպման հետ:

Պարտատոմսերի պահպանումն ու հաշվառումն իրականացվում է Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա ԲԲԸ-ում՝ ըստ համապատասխան կարգի:

Պարտատոմսերի նկատմամբ իրավունքների և պարտականությունների հաշվառումը իրականացվում է «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարի» ԲԲԸ-ն. հասցեն՝ ՀՀ, 0010, ք. Երևան, Սիեր Սկրտչյան 5բ, հեռ. (37410) 566-446, 520-978:

2) Թողարկողի վերաբերյալ տեղեկություններ


ա. Ընկերության ֆիրմային լրիվ անվանումն է՝

«ԷԼԻՏ ԳՐՈՒՊ» փակ բաժնետիրական ընկերություն
Չաթժնժի ձ ձեծեի Ի ձժի Ի ձ Ի ձնձնձձի «YĒĒO ĀDŌI »
«ELITE GROUP» Closed Joint Stock Company

բ. «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ն կառավարում է իրականացնում էլիտար բնակարանների եւ հասարակական համալիրների շինարարության, սպասարկման, ինչպես նաև բնակարանների ներքին հարդարման եւ դիզայնի ոլորտում: Ընկերությունը իրականացնում է շինությունների կառուցման կառավարում, իսկ բուն շինարարությունը՝ նախագծումից մինչև շահագործման հանձնման փուլերը, իրականացնում են մասնագիտացված կազմակերպությունները, որոնց հետ ընկերությունը կնքում է համապատասխան պայմանագրեր:

Ընկերությունն իր գործունեությունը ծավալում է բնակարանաշինության շուկայի էլիտար հատվածում և այն Ընկերության հիմնական գործունեությունն է:

գ. Ստորև ներկայացված գրաֆիկը հնարավորություն կտա համառոտ պատկերացում կազմել Ընկերության գործունեության արդյունքների մասին:



2005 թվականին համախառն շահույթի բացակայությունը պայմանավորված է նրանով, որ ընկերությունը նշված տարիներին չի ունեցել իրացում, քանի որ այդ ժամանակաշրջանում ընկերությունը իրականացրել է շենքերի շինարարությունը, և ստացել է միայն կանխավճարներ:

2006 թվականի ընթացքում ընկերությունը իրացրել է 1 բազմաբնակարան շենք, որի արդյունքում ընկերության համախառն շահույթը և զուտ շահույթը կտրուկ աճել են:

դ. Ընկերության կառավարման մարմիններն են՝

- Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը,
- Ընկերության գլխավոր տնօրենը
- Ընկերության վերստուգողը:

Կառավարմանը մասնակցող անձինք են՝ Արմեն Սկոյանը (գլխավոր տնօրեն), Մարինե Ստեփանյանը (ֆինանսական տնօրեն), Ալլա Դուկասյանը (վերստուգող):

ե. Թողարկողի հետ փոխկապակցված անձինք և սեփականատերերն են.

Ընկերության սեփականատերերն են Արմեն Սկոյանը (60.00%), Ամատունի Տոնոյանը (20.00%), Հայկազ Բախշեցյանը (20.00%):

Ընկերության հետ փոխկապակցված ֆիզիկական անձինք են՝

Արմեն Սկոյանը՝ տիրապետում է Ընկերության թողարկած 60000 հատ հասարակ անվանական բաժնետոմսի (60.00%):

Ամատունի Տոնոյանը՝ տիրապետում է Ընկերության թողարկած 20000 հատ հասարակ անվանական բաժնետոմսի (20.00%):

Հայկազ Բախշեցյանը՝ տիրապետում է Ընկերության թողարկած 20000 հատ հասարակ անվանական բաժնետոմսի (20.00%):

Ընկերության հետ փոխկապակցված իրավաբանական անձ են հանդիսանում՝

- «Մետքս» ՓԲԸ-ն, որի բաժնետերեր են հանդիսանում Ամատունի Տոնոյանը և Հայկազ Բախշեցյանը, տնօրենը՝ Ամատունի Տոնոյան:
- «Եվրոպրոֆայլ» ՓԲԸ-ն, որի բաժնետերեր են հանդիսանում Ամատունի Տոնոյանը, Արմեն Սկոյանը և Հայկազ Բախշեցյանը:
- «Հոթել Աղվերան» ՓԲԸ-ն՝ 100%-ի բաժնետեր է հանդիսանում «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ն:
- «Ձերմուկ Ռիզորթ» ՍՊԸ-ն, 1/3 բաժնեմասը պատկանում է «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ին:
- «Շեն Ջորջիա»-ն, որի 35% բաժնեմասը պատկանում է «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ին:

Արմեն Սկոյանը հանդիսանում է բաժնետոմսերի խոշոր սեփականատեր նաև մի քանի այլ ընկերություններում հետևաբար այդ ընկերությունները «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ի հետ փոխկապակցված են, քանի որ դրանք գտնվում են ընդհանուր վերահսկողության ներքո: Այդպիսով փոխկապակցված անձինք հետևյալներն են.

- «Փունջ» ՍՊԸ – ում 30% բաժնեմասով:
- «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ – ում` 33.33%:
- «Հիդրոէներգիա» ՍՊԸ – ում 21% բաժնեմասով:
- «ԷլԷնԷքս» ՍՊԸ – ում – 31,55% բաժնեմասով:
- «Էլիտ Հոլդինգ» ՍՊԸ-ում - 60% բաժնեմասով:

«Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ի հետ փոխկապակցված է նաև «Էլիտ Սերվիս» ՍՊԸ-ն, որի 100% բաժնեմասի սեփականատեր Լարիսա Սկոյանը «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ի 60%-ի սեփականատեր Արմեն Սկոյանի կինն է:

գ. Ընկերությունը մինչ այժմ ունի թողարկած 1792500 հատ 1000 ՀՀ դրամ անվանական արժեքով հասարակ անվանական բաժնետոմս և 131375 հատ 1000 ՀՀ դրամ անվանական արժեքով արժեկտրոնային պարտատոմս:

Ներդրողը առաջարկվող պարտատոմսերում ներդրում անելու որոշումը կայացնելիս պետք է ընթերցի ամբողջ ազդագիրը:

Ամփոփաթերթը կազմվել է Ընկերության ֆինանսական տնօրեն - գլխավոր հաշվապահի կողմից: Ամփոփաթերթի կազմման համար պատասխանատու անձը պատասխանատվություն է կրում ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու համար (այդ թվում` թարգմանությանը վերաբերող մասով) միայն այն դեպքում, եթե այն ոչ ճշգրիտ, անհամատեղելի է ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում:

Պարտատոմսերի ազդագիրը և կից ներկայացվող փաստաթղթեր ներդրողը կարող է ստանալ «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ից, (ՀՀ, ք. Երևան 0002, Ամիրյան փողոց 27, գրասենյակ 14, հեռ. 50-15-27), ինչպես նաև «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ի ինտերնետային էջից` www.elitegroup.am:

ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԱՌԵՎՏՐԻՆ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընդհանուր տեղեկություններ

ա. Ընկերության թողարկված պարտատոմսերը անվանական, ոչ փաստաթղթային, արժեկտրոնային, ինվեստիցիոն /ներդրումային/ պարտատոմսեր են:

բ. Ընկերության թողարկված և առաջին տրանշով տեղաբաշխված պարտատոմսերը տարբերակիչ ծածկագիր չունեն:

գ. Կարգավորվող շուկայում առևտրին թույլատրվող պարտատոմսերի ընդհանուր ծավալը կազմում են 131375000 (մեկ հարյուր երեսունմեկ միլիոն երեք հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ՝ 131375 հաա:

դ. Մեկ պարտատոմսի անվանական արժեքը 1.000 (մեկ հազար) ՀՀ դրամ է:

ե. Պարտատոմսերը փոխարկելի չեն:

զ. Պարտատոմսերով նախատեսված պարտավորությունների կատարումն ապահովող միջոցներ նախատեսված չեն, քանի որ վերջիններս առանց ապահովման են:

է. Պարտատոմսի մարման օրը տեղաբաշխման սկզբից հաշված 730-րդ օրվան հաջորդող օրն է՝ 2010 թվականի փետրվարի 12-ը:

Ընկերությունը մարման օրվանը նախորդող օրվա ժամը 17.00-ի դրությամբ Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիայից վերցնում է պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրից քաղվածք, որի հիման վրա պարտատոմսերի սեփականատերերին՝ կանխիկ՝ Ընկերության դրամարկղից, կամ քանկային հաշիվներին փոխանցելու միջոցով, վճարում է համապատասխան գումարներ (պարտատոմսերի անվանական արժեքը): Միաժամանակ Ընկերությունը հանձնարարական է տալիս Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիային՝ պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրից տրված քաղվածքում նշված քանակության պարտատոմսերը մարելու համար:

Պարտատոմսերի վաղաժամկետ մարում չի նախատեսվում:

ը. Պարտատոմսերի նկատմամբ որևէ սահմանափակում թողարկողի կանոնադրությամբ կամ պարտատոմսերի թողարկման մասին որոշմամբ սահմանված չէ:

Պարտատոմսերի սեփականատերերի հիմնական իրավունքները

Ընկերության պարտատոմսերի սեփականատերերն իրավունք ունեն՝ տեղաբաշխման սկզբից հաշված 365 օր հետո, և տեղաբաշխման սկզբից հաշված 730 օր հետո ստանալ վճարվող արժեկտրոնները, դրանց հաշվարկման օրից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Պարտատոմսերի սեփականատերերն իրավունք ունեն պարտատոմսերի մարման օրվանից հաշվարկված երեք աշխատանքային օրվա ընթացքում Ընկերությունից ստանալ պարտատոմսի անվանական արժեքը:

Պարտատոմսերը սահմանված ժամկետում չմարելու դեպքում Ընկերությունը կարող է լուծարվել դատական կարգով: Ընկերության լուծարման դեպքում պարտատոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ծանոթանալ Ընկերության լուծարմանն առնչվող բոլոր փաստաթղթերին: Լուծարման հանձնաժողովը մամուլում հայտարարություն է գետեղում Ընկերության լուծարման և պարտատերերի պահանջների ներկայացման կարգի և ժամկետի մասին: Պարտատոմսերի կողմից պահանջներ ներկայացնելու ժամկետն ավարտելուց հետո լուծարման հանձնաժողովը կազմում է միջանկյալ լուծարման հաշվեկշիռ, որը տեղեկություններ է պարունակում լուծարվող Ընկերության գույքի կազմի, պարտատերերի ներկայացրած պահանջների ցանկի, ինչպես նաև պահանջների քննարկման արդյունքների մասին: Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի, Ընկերության պարտատերերին վճարումները կատարվում են ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքի 70-րդ հոդվածով սահմանված հերթականությամբ, որի համաձայն Ընկերության կողմից առաջարկվող պարտատոմսերի սեփականատերերի պահանջները բավարարվում են հինգերորդ հերթին: Ընդ որում յուրաքանչյուր հերթի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարելուց հետո: Պարտատոմսերի սեփականատերերը կարող են օգտվել օրենքով և իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներից:

Պարտատոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ինքնուրույնաբար տնօրինել, տիրապետել և օգտագործել իրենց սեփականության ներքո գտնվող պարտատոմսերը: Ընդ որում, պարտատոմսերի վաճառքը կարող է կատարվել ինպես Հայաստանի ֆոնդային բորսայում, այնպես էլ բորսայից դուրս:

Պարտատոմսեր ձեռք բերող անձը պարտավոր է Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայում բացել անձնական հաշիվ՝ վերջինիս կողմից սահմանված կանոններին համաձայն:

Երկրորդային շուկայում պարտատոմսեր ձեռք բերող կամ օտարող անձը պարտավոր է իր հաշվին կատարել Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի կամ Հայաստանի ֆոնդային բորսայի կողմից սահմանված պարտադիր վճարները՝ կապված սեփականության իրավունքի գրանցման կամ գործարքների ձևակերպման հետ:

Պարտատոմսերի գնի վերաբերյալ տեղեկություններ

Մեկ պարտատոմսի տեղաբաշխման գինը որոշվում է համաձայն հետևյալ բանաձևի՝

$$P = \frac{N}{\left(1 + R \times \frac{t}{365}\right)} \times \left\{ c \times \sum_{j=1}^n \frac{1}{(1 + R)^{j-1}} + \frac{1}{(1 + R)^{n-1}} \right\}$$

որտեղ՝

P – Պարտատոմսի գինն է,

N – Պարտատոմսի անվանական արժեքն է

R – Պարտատոմսի դիմաց վճարվող տարեկան տոկոսադրույքի բացարձակ արժեքն է,

t – Մինչև տվյալ արժեկտրոնի վճարումը մնացած օրերի քանակն է,

c – տարեկան վճարվող արժեկտրոնային տոկոսադրույքն է,

n - արժեկտրոնի վճարումների քանակն է,

j – արժեկտրոնի տվյալ հերթական համարն է, որը փոխվում է տվյալ պահից մինչև վերջնական մարումը մնացած արժեկտրոնների վճարումների քանակից կադված:

Պարտատոմսերից ստացվող եկամուտների վերաբերյալ տեղեկություններ

Ընկերությունը պարտատոմսերի դիմաց վճարվող արժեկտրոնը հաշվարկում է հետևյալ բանաձևով:

$$A = \frac{N \times c}{100}$$

որտեղ՝

A – յուրաքանչյուր տարի վճարվող արժեկտրոնի չափն է,

N – Պարտատոմսի անվանական արժեքն է,

c – տարեկան վճարվող արժեկտրոնային տոկոսադրույքն է:

Պարտատոմսերի առաջին տրանշի տարեկան վճարվող արժեկտրոնի տոկոսադրույքը (c) 10.5% է:

Ընկերությունը պարտատոմսերի դիմաց վճարվող արժեկտրոնը հաշվարկում է երկու անգամ՝ տեղաբաշխման սկզբից հաշված 366-րդ օրը (12.02.2009թ.), և տեղաբաշխման սկզբից հաշված 731-րդ օրը (12.02.2010թ.): Արժեկտրոնի գումարը Ընկերություն վճարում է պարտատոմսերի սեփականատերերին արժեկտրոնի հաշվարկման օրից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Ընկերությունը արժեկտրոնների հաշվարման օրվան նախորդող օրվա ժամը 17.00-ի դրությամբ Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիայից վերցնում է պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրից քաղվածք, որի հիման վրա պարտատոմսերի սեփականատերերին՝ կանխիկ՝ Ընկերության դրամարկղից (որը գտնվում է ՀՀ, ք. Երևան Պուշկին 21/3 օֆիսային տարածքում), կամ բանկային հաշիվներին փոխանցելու միջոցով, վճարում է համապատասխան գումարներ:

Ոչ ռեզիդենտ անձանց համար վճարումների առանձանահտկություններ սահմանված չեն:

Պարտատոմսերի հաշվառմամբ զբաղվող կազմակերպություններ

Պարտատոմսերի պահպանումն ու հաշվառումն իրականացվում է Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա ԲԲԸ-ում՝ ըստ համապատասխան կարգի:

Պարտատոմսերի նկատմամբ իրավունքների և պարտականությունների հաշվառումը իրականացվում է «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարի» ԲԲԸ-ն. հասցեն՝ ՀՀ, 0010, ք. Երևան, Սիեր Սկրոչյան 5բ, հեռ. (37410) 566-446, 520-978:

ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընդհանուր տեղեկություններ

1. Թողարկողի պատմությունը և զարգացումը

ա. Ընկերության ֆիրմային լրիվ անվանումն է՝

«ԷԼԻՏ ԳՐՈՒՊ» փակ բաժնետիրական ընկերություն
Չաթուծի ձ աթուծի ի ձծի ի ձ ի ձնաձծաի «ՎԵՆՈ ԱԾՈՒ »
«ELITE GROUP» Closed Joint Stock Company

Ընկերության կրճատ ֆիրմային անվանումն է՝

«ԷԼԻՏ ԳՐՈՒՊ » ՓԲԸ
ՉԱԻ «ՎԵՆՈ ԱԾՈՒ »
«ELITE GROUP» CJSC

բ. Ընկերության կազմակերպական-իրավական ձևը՝ փակ բաժնետիրական ընկերություն (գրանցված 04.09.2002թ.): «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ն հանդիսանում է «Էլիտ Փրոջեքթ Շին» փակ բաժնետիրական ընկերության իրավահաջորդը համաձայն 17.01.2005թ. ժողովի թիվ 2 արձանագրության:

գ. Ընկերությունը առաջին անգամ գրանցվել է 04.09.2002 թ. գրանցման վկայական 03 Ա 056024, գրանցման համարը 264.120.05916, Հայաստանի Հանրապետությունում, ք. Երևան Կոմիտաս 63ա հասցեում, որպես «Էլիտ Փրոջեքթ Շին» փակ բաժնետիրական ընկերություն: Ընկերությունը փաստացի գործունեություն է իրականացնում 2002 թվականից:

2. Ֆինանսական և այլ խմբերի վերաբերյալ տեղեկություններ

Ընկերությունը որևէ արդյունաբերական, բանկային, ֆինանսական խմբերում, հողի զեկտորում, կոնցեռններում և միություններում մասնակցություն չունի:

3. Թողարկողի աուդիտն իրականացնող անձինք

ա. Վերջին երեք տարիների ընթացքում Ընկերության աուդիտն իրականացրել է «ԹՄ Աուդիտ» Փակ Բաժնետիրական Ընկերությունը՝ հասցեն ք. Երևան, Տերյան 105/1, հեռ. (+374 10) 51-43-14:

բ. Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 3 տարվա ընթացքում թողարկողի աուդիտն իրականացրած անձանց կողմից աշխատանքից հրաժարման, վերընտրությանը չմասնակցելու, աշխատանքից ազատման դեպքեր չեն եղել:

4. Փորձագետների մասնագիտական կարծիքը և այլ անձանցից ստացված տեղեկությունները

Թողարկողը չունի փորձագետ կամ խորհրդատու, որոնց մասնագիտական կարծիքն օգտագործվել է սույն ազդագրում:

5. Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի չափը

Թողարկողի կանոնադրական կապիտալը 1.792.500.000 (մեկ միլիարդ յոթ հարյուր իննսուներկու միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ է: Ընկերության տեղաբաշխել է հասարակ անվանական բաժնետոմսեր, որնք 100%-ով վճարված են: Վերջին երեք տարիների ընթացքում կանոնադրական կապիտալի փոփոխություն տեղի է ունեցել՝

1. 2006 թվականին՝ կանոնադրական կապիտալը 100.000 ՀՀ դրամից դարձել է 100.000.000 ՀՀ դրամ՝ բաժնետոմսերի լրացուցիչ թողարկման միջոցով:

2. 2007 թվականի դեկտեմբերին բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ բաժնետոմսերի լրացուցիչ թողարկման և տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալը 100.000.000 ՀՀ դրամից դարձել է 1.792.500.000 ՀՀ դրամ: Կանոնադրական կապիտալի այս փոփոխությունը և նոր խմբագրությամբ կանոնադրությունը գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում 28.12.2007թ.-ին:

Չվճարված բաժնետոմսեր չկան:

Ընկերությունը կանոնադրական կապիտալի մեծացման վերաբերյալ նոր մտադրություններ չունի:

6. Պարտատոմսերով նախատեսված պարտավորությունների երաշխավորողի վերաբերյալ տեղեկություններ

Պարտատոմսերով նախատեսված պարտավորությունների երաշխավորող չկա, քանի որ տեղաբաշխված պարտատոմսերը առանց ապահովման են:

7. Թողարկողի կողմից թողարկված արժեթղթերի նկատմամբ առկա օպցիոնների վերաբերյալ տեղեկություններ

Ընկերության կողմից թողարկված արժեթղթերի նկատմամբ առկա օպցիոններ չկան:

Թողարկողի գործունեության վերաբերյալ տեղեկություններ

1. Ռիսկային գործոններ

Պարտատոմսերում ներդրումը կապված է որոշակի ռիսկերի հետ: Պոտենցիալ ներդրողը, մինչև պարտատոմսերում ներդրում կատարելու մասին որոշում ընդունելը, պետք է շրջահայաց լինի և հաշվի առնի ստորև բերված ռիսկերը և սույն ազդագրում ներառված այլ տեղեկատվությունը: Ստորև նշված ռիսկերը կամ դրանց մի մասը կարող են բացասաբար անդրադառնալ պարտատոմսերի առուվաճառքի գների վրա, և որպես արդյունք՝ հանգեցնել նրան, որ ներդրողը կարող է կորցնել ներդրված գումարը կամ դրա մի մասը:

Պոտենցիալ ներդրողը պետք է գիտակցի, որ ստորև բերված ռիսկերը ոչ բոլոր ռիսկերն են, որ թողարկողը կարող է երբևէ կրել: Թողարկողը բացահայտել է միայն այն ռիսկերը, որոնք նա համարել է էական: Ենթադրաբար կարող են լինել լրացուցիչ ռիսկեր, որոնք թողարկողն այժմ չի համարում էական կամ, որոնք ներկայումս հայտնի չեն, և ցանկացած այդպիսի ռիսկ կարող է թողնել վերևում նշված ազդեցությունն ու հետևանքը:

Պարտատոմսերի հետ կապված ռիսկեր: Հայաստանի ֆինանսական շուկայում առկա տոկոսադրույքների տատանումը կարող է բացասաբար ազդել պարտատոմսերի եկամտաբերության և իրացվելության ցուցանիշների վրա:

Ներդրողները պետք է խորհրդակցեն իրենց իրավաբանների հետ պարզելու համար, թե արդյոք պարտատոմսերում ներդրումը հանդիսանում է իրավաբանորեն թույլատրելի ներդրում, և ինչպես ու ինչ ձևով պարտատոմսերը կարող են օգտագործվել որպես գրավի առարկա զանազան փոխառությունների համար: Դեռ ավելին, ֆինանսավարկային կազմակերպությունները պետք է խորհրդակցեն իրենց իրավաբանների կամ կարգավորող մարմինների հետ պարզելու համար պարտատոմսերով գործաքների համապատասխանությունը՝ ակտիվների ռիսկերի կշռման կամ կիրառելի նմանատիպ այլ կանոններին:

Թողարկողի գործունեության հետ կապված ռիսկեր: Հայաստանի մակրոտնտեսական իրավիճակի և շինարարության շուկայի փոփոխությունները կարող են ազդել թողարկողի իրացման ծավալների վրա: Հայաստանում շինարարության ծավալների զգալի փոփոխության հավանականությունը թվում է որ կլինի ոչ էական, հաշվի առնելով տնտեսության այդ հատվածի տարեկան 11-13% կայուն աճը: Այնուամենայնիվ, այն չպետք է ազդի թողարկողի՝ փոխառությունները վերադարձնելու հնարավորությունների վրա, ինչը հավաստվում է թողարկողի գգուշավոր քաղաքականությամբ, բավարար իրացվելիությամբ, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից շնորհված «Գ+» վարկանիշով:

Ընկերության գործունեության վրակարող է բացասաբար անդրադառնալ նաև անշարժ գույքի գների կտրուկ անկումը, ինչը սակայն՝ ելնելով վերջին տարիների անշարժ գույքի գների տենդենցներից՝ մեր կարծիքով քիչ հավանական է:

Տարերային խոշոր աղետները նույնպես կարող է բացասական ազդեցություն ունենալ Ընկերության բնականոն գործունեության, հետևաբար ընկերության ֆինանսական ցուցանիշների վրա:

2. Թողարկողի հիմնական գործունեության նկարագիրը

ա. «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ն կառավարում է իրականացնում էլիտար բնակարանների եւ հասարակական համալիրների շինարարության, սպասարկման, ինչպես նաև բնակարանների ներքին հարդարման եւ դիզայնի ոլորտում: Ընկերությունը իրականացնում է շինությունների կառուցման կառավարում, իսկ բուն շինարարությունը՝ նախագծումից մինչև շահագործման հանձնման փուլերը, իրականացնում են մասնագիտացված կազմակերպությունները, որոնց հետ ընկերությունը կնքում է համապատասխան պայմանագրեր:

Ընկերությունն իր գործունեությունը ծավալում է բնակարանաշինության շուկայի էլիտար հատվածում և այն Ընկերության հիմնական գործունեությունն է: Ելնելով բնակարանաշինության ոլորտում գոյություն ունեցող կայուն աճից, կարելի է ասել, որ Ընկերության գործունեությունը նույնպես ունի զարգացման կայուն աճի միտում:

բ. Ընկերությունը մինչ այժմ իրացում ունեցել է միայն 2006-2008թ 1-ին եռամսյակի ընթացքում (իրացրել է մեկ շենք, որի գգալի մասը իրացվել է 2006 թվականի ընթացքում): Նշված ժամանակաշրջանում Ընկերությունը իրացրել է 23 856,92 քմ մակերեսով բնակելի տարածք, յուրաքանչյուր քմ-ը միջինը 194 195 ՀՀ դրամ գնով: Թողարկողը չի զբաղվում բնական ռեսուրսների արդյունահանմամբ կամ վերամշակմամբ:

գ. Ընկերությունը՝ իր շենքերը և շինությունները իրացնում է տեղական շուկայում, իսկ որպես իրացման հիմնական մեթոդ ընտրված է բնակարանների կամ տարածքների արժեքի մաս-մաս վճարումը, որը կատարվում է տվյալ շինության նախագծի հաստատումից հետո մինչև վերջնական շահագործման հանձնման փուլերի ընթացքում: Հայաստանյան բնակարանաշինության շուկայի էլիտար հատվածում էլիտ Գ-րուպ ՓԲԸ-ին բաժին է ընկնող մասը դժվար է հաշվել, քանի որ նույն մակերեսով հողակտորների վրա կառուցվող շենքերի տարածքները տարբեր են կաղված դրանց նշանակությունից և հարկերից: Սակայն Կարելի է կանխատեսել, որ 2008-2010 թվականներին կնկատվի շուկայի հագեցում: Այս պայմաններում մանր կառուցապատողները կհեռանան դաշտից: Ընկերությունը չունի խոշոր սպառողներ, որոնց բաժին է ընկնում սպառման էական մասը:

դ. Թողարկողի հիմնական մրցակիցներն են հանդիսանում Նորդ Այլենդ, Գրիար ՓԲԸ, Գլենդեյլ Հիլզ-City Center Development, Բիշին ՍՊԸ, Տոնուս ՍՊԸ, Հերմեկ ՍՊԸ, Ռենկո, Գլոբուս ՍՊԸ, Վիզկոն, Էյսիֆին Ռոյալ ՍՊԸ, СОГЛАСИЕ АРМЕНИЯ, Լևոն Ամիրխանյան ՍՊԸ ընկերությունները: Նշված մրցակիցները բոլորն էլ գործունեություն են իրականացնում բնակարանաշինության ոլորտում, սակայն նրանց կատարած աշխատանքների ծավալների վերաբերյալ տեղեկություններ չկան: Ապագայում նոր մրցակիցների ի հայտ գալու վերաբերյալ տեղեկությունները նույնպես բացակայում են:

ե. Ընկերությունը ունի երկու խոշոր մատակարարներ՝ «Եվրոպրոֆայլ» ՓԲԸ և «Ռետինե Նորույթ» ՍՊԸ, որոնց բաժին է ընկնում համապատասխանաբար մատակարարումների 46 և 35.4 տոկոսները: Մատակարարումների ընդհանուր ծավալում ներառված չեն կապալառուների հետ կնքված պայմանագրերը, քանի որ դրանց գները յուրաքանչյուր ամսվա համար տարբեր են և հնարավոր չէ այդ տվյալների հիման վրա կատարել մատակարարումների վերլուծություն: Ընկերությունը ներմուծում չունի:

զ. «Էլիտ-Գրուպ» ՓԲԸ-ի կողմից նախորդ երեք տարիների ընթացքում ինչպես նաև գործողության մեջ գտնվող կնքված այն պայմանագրերի վերաբերյալ տեղեկությունները, որոնց գինը գերազանցում է Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի (31.12.2007թ. – 13289452 հազ. դրամ, 31.03.2008թ. – 14397808 հազ. դրամ) 3%-ը (398 մլն ՀՀ դրամ):

ՀՀ	Պայմանագրի առարկան	Այն անձանց անվանումը, ում հետ կնքվել է պայմանագիրը	Պայմանագրի գինը (ՀՀ դրամ)	Պայմանագրի կնքման ամսաթիվը
1	Ծառայությունների մատուցում	«Եվրոպրոֆայլ» ՓԲԸ	2004թ.՝ 455 353 000 2005թ.՝ --- 2006թ.՝ 273 000 000	14.05.2004
2	Կապիտալ շինարարության կապալի պայմանագիր	«Արամ Զուրաբյան» ՍՊԸ	գինը որոշվում է ըստ կապալառուի կողմից յուրաքանչյուր ամսվա վերջում իր կողմից ներկայացվող կատարողական ակտերի:	01.11.2006թ.
3	Կապիտալ շինարարության կապալի պայմանագիր	«ՄԼԼ Ինդասթրիզ» ՍՊԸ	գինը որոշվում է ըստ կապալառուի կողմից յուրաքանչյուր ամսվա վերջում իր կողմից ներկայացվող կատարողական ակտերի:	20.12.2004թ.
4	Կապիտալ շինարարության կապալի պայմանագիր	«Ավալոն» ՍՊԸ	գինը որոշվում է ըստ կապալառուի կողմից յուրաքանչյուր ամսվա վերջում իր կողմից ներկայացվող կատարողական ակտերի:	03.07.2006թ.
5	Կապիտալ շինարարության կապալի պայմանագիր	«Ավալոն» ՍՊԸ	գինը որոշվում է ըստ կապալառուի կողմից յուրաքանչյուր ամսվա վերջում իր կողմից ներկայացվող կատարողական ակտերի:	01.03.08թ.
6	Կապիտալ շինարարության կապալի պայմանագիր	«Արամ Զուրաբյան» ՍՊԸ	գինը որոշվում է ըստ կապալառուի կողմից յուրաքանչյուր ամսվա վերջում իր կողմից ներկայացվող կատարողական ակտերի:	28.03.08թ.
7	Կապիտալ շինարարության կապալի պայմանագիր	«Արամ Զուրաբյան» ՍՊԸ	գինը որոշվում է ըստ կապալառուի կողմից յուրաքանչյուր ամսվա վերջում իր կողմից ներկայացվող կատարողական ակտերի:	10.11.07թ.
8	Անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր	«Հայռուսգազարդ» ՓԲԸ	433 000 000	06.03.08թ.

Ընկերությունը կնքել է նաև հետևյալ վարկային և փոխառության պայմանագրեր՝

	Պայմանագրի առարկան	Այն անձանց անվանումը, ում հետ կնքվել է պայմանագիրը	Պայմանագրի գինը	Պայմանագրի կնքման ամսաթիվը
1.	Վարկի տրամադրում	«Արարատբանկ» ԲԲԸ	83 300 000 AMD և 245000 USD	31.05.2007-26.10.2010
2.	Վարկային գծի տրամադրում	«Կոմվերս Բանկ» ՓԲԸ	200 000 000 AMD	17.10.2007-17.10.2008
3.	Վարկային գծի տրամադրում	«Նորվիկ ՈՒՎԿ» ՓԲԸ	5 000 000 USD	17.05.2007
4.	Փոխառության տրամադրում	Կազիե Կարել Ժորիս Անտոնիուս	1 000 000 USD	26.06.07թ.- 30.04.2010թ.
5.	Փոխառության տարամադրում	Արմեն Սկոյան	514 558 000 AMD	04.01.2003-31.12.2014
6.	Փոխառության տարամադրում	Արմեն Սկոյան	1 631 064 000 AMD	04.01.2004-31.12.2014
7.	Փոխառության տարամադրում	Արմեն Սկոյան	1 341 954 000 AMD	04.01.2005-31.12.2014
8.	Փոխառության տարամադրում	Արմեն Սկոյան	1 800 000 000 AMD	07.01.2006-31.12.2014
9.	Փոխառության տարամադրում	Հայկազ Բախշեցյան	171 520 000 AMD	04.01.2003-31.12.2014
10.	Փոխառության տարամադրում	Հայկազ Բախշեցյան	434 481 000 AMD	04.01.2004-31.12.2014
11.	Փոխառության տարամադրում	Հայկազ Բախշեցյան	443 599 000 AMD	04.01.2005-31.12.2014
12.	Փոխառության տարամադրում	Հայկազ Բախշեցյան	600 000 000 AMD	07.01.2006-31.12.2014
13.	Փոխառության տարամադրում	Հայկազ Բախշեցյան	33 750 000 AMD	01.07.2006-31.12.2014
14.	Փոխառության տարամադրում	Ամատունի Տոնոյան	171 520 000 AMD	04.01.2003-31.12.2014
15.	Փոխառության տարամադրում	Ամատունի Տոնոյան	434 481 000 AMD	04.01.2004-31.12.2014
16.	Փոխառության տարամադրում	Ամատունի Տոնոյան	443 599 000 AMD	04.01.2005-31.12.2014
17.	Փոխառության տարամադրում	Ամատունի Տոնոյան	600 000 000 AMD	07.01.2006-31.12.2014
18.	Փոխառության տարամադրում	Ամատունի Տոնոյան	46 000 000 AMD	01.07.2006-31.12.2014
19.	Փոխառության տարամադրում	«Մետեքս» ՓԲԸ	343750000 AMD	18.04.2004-31.12.2014
20.	Փոխառության տարամադրում	Արմեն Սկոյան	1763400000 AMD	01.01.2007-31.12.2016
21.	Փոխառության տարամադրում	Հայկազ Բախշեցյան	1279700000 AMD	01.01.2007-31.12.2016
22.	Փոխառության տարամադրում	Ամատունի Տոնոյան	1264800000 AMD	01.01.2007-31.12.2016

Արմեն Սկոյանի, Ամատունի Տոնոյանի, Հայկազ Բախշեցյանի և «Մետեքս» ՓԲԸ-ի հետ կնքված փոխառության պայմանագրերի համաձայն՝ փոխառությունները տրամադրվել են անտոկոս:

Է. Ընկերությունը իր գործունեություն իրականացնելու համար որևէ լիցենզիա, կամ արտոնագիր չունի:

3. Թողարկողի հիմնական և ոչ հիմնական գործունեության մեջ ներգրավված գույքը

Ընկերության ադմինիստրատիվ տարածքները տեղակայված են՝ Պուշկին 21/3 հասցեում գնվող երկու օֆիսային տարածքներում (Գ-րասենյակ N1 - 165 քմ - հաշվեկշռային արժեք- 15560044 դրամ, Գ-րասենյակ N2 - 167.4 քմ - հաշվեկշռային արժեք - 18516198 դրամ):

Ընկերությունը հիմնական գործունեության մեջ ներգրավված հողերը, նրանց գտնվելու վայրը և օգտագործման նպատակը բերված է ստորև աղյուսակում՝

Գտնվելու վայրը	Տարածքի մեծությունը (հա)	Տնօրինման ձևը	Օգտագործման նպատակը
Դեմիրճյան փողոց 14 տուն	0.0026	սեփականություն	շենքերի կառուցապատում
Դեմիրճյան փողոց 12-14 տուն	0.1308	սեփականություն	շենքերի կառուցապատում
Դեմիրճյան փողոց 1-ին փակուղի, տուն 1	0.04201	սեփականություն	շենքերի կառուցապատում
Դեմիրճյան փողոց 1-ին փակուղի, տուն 3	0.0339	սեփականություն	շենքերի կառուցապատում
Դեմիրճյան փողոց 1-ին փակուղի, տուն 5	0.033	սեփականություն	շենքերի կառուցապատում
Դեմիրճյան փողոց 7	0.02834	սեփականություն	շենքերի կառուցապատում
Դեմիրճյան փողոց 9 տուն	0.0259	սեփականություն	շենքերի կառուցապատում
Դեմիրճյան փողոց 5	0.0434	սեփականություն	շենքերի կառուցապատում
Դեմիրճյան փողոց	0.044	սեփականություն	շենքերի կառուցապատում
Դեմիրճյան փողոց 9/2	0.0017	սեփականություն	շենքերի կառուցապատում
Կոմիտասի պողոտա 12 տաղավար	0.03236	սեփականություն	շենքերի կառուցապատում
Խորենացի փողոց 15	0.46	վարձակալություն	շենքերի կառուցապատում
Խմելնիցկու փողոց 29	0.5909	վարձակալություն	շենքերի կառուցապատում
Չորափ 40/1, 40/2, 40/3, 40/4, 40/5	0.4022	կառուցելու նպատակով հողամասը գնելու իրավունքով	շենքերի կառուցապատում
Գլաձոր՝ «Տնտեսաիրավագիտական» և «Գլաձոր» համալսարանների միջանկյալ հատված	0.2150	սեփականություն	շենքերի կառուցապատում
Բաղրամյան 59	0.0864	սեփականություն	շենքերի կառուցապատում
Բաղրամյան 59	0.0856	սեփականություն	շենքերի կառուցապատում
Բաղրամյան 59	0.012188	սեփականություն	շենքերի կառուցապատում
Արամի փողոց 62; 64; 66; 68	0.3490	սեփականություն	շենքերի կառուցապատում
Էմինսկու փողոց 4/1	0.87565	սեփականություն	շենքերի կառուցապատում
Հյուսիսային ճառագայթ 3-րդ հատված	0.4	սեփականություն	շենքերի կառուցապատում
Հյուսիսային ճառագայթ 25/1 հողամաս	0.384	սեփականություն	շենքերի կառուցապատում
Հյուսիսային ճառագայթ 25/1 հողամաս	0.016	սեփականություն	շենքերի կառուցապատում
Արաբկիր 41 փողոց, թիվ 31	0.0812	սեփականություն	շենքերի կառուցապատում
Մամիկոնյանց փող. թիվ 41	0.06848	սեփականություն	շենքերի կառուցապատում
ք.Ճաղկաձոր	4.7	սեփականություն	շենքերի կառուցապատում

Ընկերությունը Խորենացի փողոց 15, Խմելնիցկու փողոց 29 հասցեներում գտնվող հողերը վերցրել է վարձակալության 99 տարի ժամկետով, որոնց համար կնքված են համապատասխան պայմանագրեր: Ըստ այդ պայմանագրերի նշված հողատարածքներում Ընկերությունը իրավունք ունի կառուցել շենքեր: Սակայն իրավունք չունի առանց վարձատուի համաձայնության հանձնել ենթավարձակալության, օտարել, կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք կհանգեցնեն հողի արժեքի նվազեցման:

«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ-ի 26.10.2007թ.-ին կնքված վարկային պայմանագրի շրջանակներում, որպես ստացված վարկի վերադարձման ապահովման երաշխիք, մինչև պայմանագրով սահմանված պարտավորությունների ամբողջական կատարումը, գրավադրված է անավարտ արտադրությունում հաշվառված՝ ք. Երևան, Կենտրոն համայնք, Դեմիրճյան փողոց թիվ 5 և թիվ 3 հասցեներում գտնվող համապատասխանաբար 330 քառակուսի մետր և 339 քառակուսի մետր հողատարածքները, Դեմիրճյան 1-ին փակուղի թիվ 1 բնակելի տունը՝ 420.1 քառակուսի մետր հողամաս և 144.6 քառակուսի մետր շինությունը:

«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ-ի հետ 17.12.2007թ.-ին կնքված վարկային գծի տրամադրման համաձայնագրի շրջանակներում, որպես ստացված գումարների վերադարձման ապահովման երաշխիք, մինչև պայմանագրով սահմանված պարտավորությունների ամբողջական կատարումը, գրավադրված է անավարտ արտադրությունում հաշվառված՝ ք. Երևան, Կենտրոն համայնք, Դեմիրճյան փակուղի թիվ 5 բնակելի տունը (434 քառակուսի մետր հողամաս, 136 քառակուսի մետր շինություն և 44.7 քառակուսի մետր ինքնակամ շինություն) և Դեմիրճյան փողոց թիվ 9 բնակելի տունը (259 քառակուսի մետր հողամաս, 148.5 քառակուսի մետր շինություն և 171.1 քառակուսի մետր ինքնակամ շինություն):

«Նորվիկ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի հետ 2007թ. մայիսի 17-ին կնքված վարկային գծի պայմանագրի շրջանակներում, որպես ստացված գումարների գծով պարտավորությունների կատարման ապահովման երաշխիք՝ գրավադրված է ք. Երևան, Կենտրոն համայնք, Ձորափի փողոց թիվ 40/1, 40/2, 40/3, 40/4, 40/5 հասցեի հողամասը՝ 4,022 քառակուսի մետր:

«Կոմվերս բանկ» ՓԲԸ-ի հետ 2004թ. մայիսի 27-ին կնքված հիմնական վարկային պայմանագրի շրջանակներում, որպես ստացվող վարկերի գծով պարտավորությունների կատարման ապահովման երաշխիք՝ գրավադրված է ք. Երևան, Արաբկիր համայնք, Բաղրամյան փողոց թիվ 59 հասցեի հողամասը՝ 1720 քառակուսի մետր և շինությունը՝ 125.32 քառակուսի մետր:

Համաձայն վերանշյալ երեք վարկային պայմանագրերի գրավադրված գույքը և հողը Ընկերությունը իրավունք ունի օգտագործել ըստ նշանակության, սակայն իրավունք չունեն մինչև պայմանագրի ավարտը օտարել կամ կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք կհանգեցնեն գույքի արժեքի նվազեցման, առանց վարկատուների գրավոր համաձայնության: Վարկերը չմարելու դեպքում վարկատուները իրավունք ունեն իրացնել գրավադրված գույքը վարկերի ժամկետանց համարվելու պահից:

Ընկերության Ամիրյան 27 հասցեում գտնվող մեկ կաթսայատունը (68,067 հազար դրամ համախառը հաշվեկշռային արժեքով), հանձնված են գործառնական վարձակալության «Էլիտ Սերվիս» ՍՊԸ-ին, ամսական 840 հազար դրամ վարձավճարով:

Ընկերության Ամիրյան 27 հասցեում գտնվող թիվ 14 գրասենյակը (68,067 հազար դրամ համախառը հաշվեկշռային արժեքով), հանձնված են վարձակալության «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ին, ամսական 504 հազար դրամ վարձավճարով:

Ընկերությունը, որպես շինարարության մեջ ներգրավված մեքենա-սարքավորումներ ունի ներքոհիշյալ 4 կռունկները, որնք բոլորն էլ տրված են վարձակալության:

Աշտարակային Կռունկ- KB 573 (Հաշվեկշռային արժեքը՝ 8687416)
 Կռունկի վարձակալության պայմանագիրը կնքված է 01.11.2006թ. «Արամ Զուրաբյան» ՍՊԸ-ի հետ: Պայմանագիրը կնքված է 1 տարի ժամկետով, ամսական 150000դրամ: Պայմանագրի ժամկետը՝ ժամկետի ավարտին երկարացվել է ևս 1 տարով:

Աշտարակային Կռունկ- KB 573 (Հաշվեկշռային արժեքը՝ 1720000)
 Կռունկի վարձակալության պայմանագիրը է 01.10.2006թ. «Ավալոն» ՍՊԸ-ի հետ: Պայմանագիրը կնքված է 1 տարի ժամկետով, ամսական 275000դրամ: Պայմանագրի ժամկետը՝ ժամկետի ավարտին երկարացվել է ևս 1 տարով:

Աշտարակային Կռունկ- KB 403-P (Հաշվեկշռային արժեքը՝ 2895000) և Կռունկ – 403-1A (Հաշվեկշռային արժեքը՝ 1500000)
 Կռունկների վարձակալության պայմանագիրը կնքված է 03.01.2007թ. «Ավալոն» ՍՊԸ-ի հետ: Պայմանագիրը կնքված է 1 տարի ժամկետով, ամսական 550000դրամ: Պայմանագրի ժամկետը՝ ժամկետի ավարտին երկարացվել է ևս 1 տարով:

Կարել Կազիե Ժորիս Անտոնիուսի հետ կնքված փոխառության պայմանագրերով նախատեսված պարտավորությունների կատարման ապահովման միջոց գրավադրված է Հյուսիսային ճառագայթ թաղ. թիվ 26 հողամասը՝ 0.4 հա: Ըստ այդ պայմանագրերի նշված հողատարածքներում Ընկերությունը իրավունք ունի կառուցել շենքեր: Մակայն իրավունք չունի առանց վարձատուի համաձայնության հանձնել ենթավարձակալության, օտարել, կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք կհանգեցնեն հողի արժեքի նվազեցման:

Ընկերությունը ունի թվով 8 հատ տրանսպորտային միջոցներ՝

Տրանսպորտային միջոցի անվանումը	արտադրման տարեթիվը	Արժեքը
Մեքենա MBE 100	2003թ.	11646431,00
Մեքենա Շկոդա	2006թ.	8152580,00
Մեքենա ՎԱԶ 2110	2005թ.	2000000,00
Մեքենա ՎԱԶ 2110	2004թ.	3420000,00
Մեքենա ՎԱԶ 2115	2003թ.	3245500,00
Մեքենա ՎԱԶ 2115	2004թ.	2929667,00

Mitsubishi Pajero	2006թ.	8938930,00
Mitsubishi Pajero 4 դուռ	2007թ.	15822769,00

Ընկերության հիմնական միջոցների կառուցվածքը 31.12.2007 թվականի դրությամբ ունի հետևյալ տեսքը.

Հիմնական միջոցների խմբեր	31.12.2007թ.-ի դրությամբ արժեքը (հազ. դրամ)	ընդհանուրի մեջ տոկոսային մասը
ա) շահագործման մեջ գտնվող մաշվող հիմնական միջոցներ, այդ թվում՝	149302	95,5 %
• Շենքեր	33091	21,2%
• Կառուցվածքներ	-	-
• Փոխանցող հարմարանքներ	-	-
• Մեքենաներ և սարքավորումներ	75845	48,5%
• Տրանսպորտային միջոցներ	39263	25,1%
• Արտադրական գույք, տնտեսական գույք, գործիքներ	1103	0,7%
բ) շահագործման մեջ չգտնվող հիմնական միջոցներ	7121	4,5%
գ) հողամասեր	-	-
Ընդամենը	156423	100,00%

Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող հողմասերը ընդգրկված են անավարտ արտադրության մեջ 8909797 հազ. դրամ հաշվեկշռային արժեքով:

4. Այն անձանց անվանացանկը, որտեղ թողարկողը, ներառյալ՝ նրա դուստր ընկերությունները, բաժնային արժեթղթերի նշանակալից կամ խոշոր սեփականատեր են

Էլիտ Գրուպ ՓԲԸ-ն բաժնետեր է հետևյալ 3 ընկերություններում՝

«Հոթել Ադվերան» ՓԲԸ –ում ունի 100% բաժնեմաս, 200 հատ սովորական անվանակն բաժնետոմս; պետական ռեգիստրի վկայական 03Ա055326; գրանցված 264.120.05856; 16.07.2002թ.: Հասցեն՝ Կոմիտաս 63^ա Հանգստյան տուն:

«Ջերմուկ Ռեզորտ» ՍՊԸ-ում՝ ունի 1/3 բաժնեմաս; պետական ռեգիստրի վկայական 03Ա074418; գրանցված 273.110.04439; 24.01.2007թ.: Հասցեն՝ Սայաթ-Նովա 15/66: Հանգստյան տուն- առողջարան:

«Շեն Զորջիա» ՍՊԸ-ում՝ ունի 35% բաժնեմաս; Վրաստանի Հանրապետություն: Շինարարական ապրանքների արտադրություն և շինարարություն:

«Հոթել Ադվերան» ՓԲԸ-ն՝ հանդիսանալով «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ի դուստր ընկերություն, որևէ այլ ընկերությունում բաժնային արժեթղթերի նշանակալից կամ խոշոր սեփականատեր չի:

5. Հարկային արտոնությունները

Ընկերությունը չի օգտվում որևէ հարկային արտոնությունից:

6. Գատական և իրավական ընթացակարգը

Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող 12 ամսվա ընթացքում թողարկողի նկատմամբ դատարանի, պետական մարմինների կողմից որևէ պատասխանատվության միջոց չի կիրառվել:

7. Փոխկապակցված գործարքների վերաբերյալ տեղեկություններ

Ընկերության փախկապակցված անձանց հետ վերջին երեք տարիների կնքված փոխառության պայմանագրերը հետևյալներն են՝

- Ընկերության հիմնադիր և գլխավոր տնօրեն Ա. Սլոյանի հետ 04.01.2003թ՝ 514558 հազար դրամ գումարով, 04.01.2004թ՝ 1631064 հազար դրամ գումարով, 04.01.2005թ՝ 1341954 հազար դրամ գումարով, 07.01.2006թ՝ 1800000 հազար դրամ գումարով (տեսակարար կշիռը ընդհանուր

եկամուտներում՝ 55.3%): 2007 թվականի ընթացքում Ա.Սկոյանը տրամադրել է 1763400 հազար դրամի փոխառություն (տեսակարար կշիռը ընդհանուր եկամուտներում՝ 484.8%) 2008 I եռամսյակում Ա. Սկոյանը տրամադրել է 265387 հազար դրամի փոխառություն (տեսակարար կշիռը ընդհանուր եկամուտներում՝ 701.8%): 2008 II եռամսյակում Ա. Սկոյանը տրամադրել է 309894 հազար դրամի փոխառություն (տեսակարար կշիռը ընդհանուր եկամուտներում՝ 819.54%¹):

- Ընկերության հիմնադիր Հ. Բախշեցյանի հետ 04.01.2003թ՝ 171520 հազար դրամ գումարով, 04.01.2004թ՝ 434481 հազար դրամ գումարով, 04.01.2005թ՝ 443599 հազար դրամ գումարով, 07.01.2006թ՝ 600000 հազար դրամ գումարով (տեսակարար կշիռը ընդհանուր եկամուտներում՝ 18.43%), 01.07.2006թ՝ 33750 հազար դրամ գումարով (տեսակարար կշիռը ընդհանուր եկամուտներում՝ 1.04%): 2007 թվականի ընթացքում Հ.Բախշեցյանը տրամադրել է 1279700 հազար դրամի փոխառություն (մասը եկամուտում՝ 351.8%) 2008 I եռամսյակում Հ.Բախշեցյանը տրամադրել է 273242 հազար դրամի փոխառություն (տեսակարար կշիռը ընդհանուր եկամուտներում՝ 721.6%): 2008 II եռամսյակում Հ.Բախշեցյանը տրամադրել է 271254 հազար դրամի փոխառություն (տեսակարար կշիռը ընդհանուր եկամուտներում՝ 574.55%):
- Ընկերության հիմնադիր Ա. Տոնոյանի հետ 04.01.2003թ՝ 171520 հազար դրամ գումարով, 04.01.2004թ՝ 434481 հազար դրամ գումարով, 04.01.2005թ՝ 443599 հազար դրամ գումարով, 07.01.2006թ՝ 600000 հազար դրամ գումարով (տեսակարար կշիռը ընդհանուր եկամուտներում՝ 18.43%), 01.07.2006թ՝ 46000 հազար դրամ գումարով (տեսակարար կշիռը ընդհանուր եկամուտներում՝ 1.41%): 2007 թվականի ընթացքում Ա.Տոնոյանը տրամադրել է 1264800 հազար դրամի փոխառություն (տեսակարար կշիռը ընդհանուր եկամուտներում՝ 347.7%): 2008 I եռամսյակում Ա. Տոնոյանը տրամադրել է 268241 հազար դրամի փոխառություն (տեսակարար կշիռը ընդհանուր եկամուտներում՝ 709.4%): 2008 II եռամսյակում Ա. Տոնոյանը տրամադրել է 270122 հազար դրամի փոխառություն (տեսակարար կշիռը ընդհանուր եկամուտներում՝ 714.36%):
- «Մետեքս» ՓԲԸ-ի հետ 18 ապրիլի 2004թ. կնքված փոխառության պայմանագրի համաձայն՝ տրամադրվել է 343750 հազար դրամի փոխառություն՝ մինչև 2014թ. դեկտեմբերի 31-ը:

Վերջին 3 տարում կնքված փոխկապակցված գործարքների վերաբերյալ տեղեկությունները ըստ առանձին տարիների և գործարքների տեսակներ ներկայացված է ստորև՝

2004 թ. Ընկերությունը կնքել է

Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) պայմանագիր

- «Եվրոպրոֆայլ» ՓԲԸ-ի հետ 14.05.2004թ., որի շրջանակներում «Եվրոպրոֆայլ» ՓԲԸ-ի կողմից հաշվետու տարում կատարվել են 38,613 հազար դրամ արժողությամբ աշխատանքներ, վճարումը կազմել է 455,353 հազար դրամ:
- «Կապույտ Երազանք» ՍՊԸ-ի հետ 01.12.2004թ., որի շրջանակներում հաշվետու տարում գործարք չի կատարվել:

Անշարժ գույքի ձեռքբերման պայմանագիր

- «Կապույտ Երազանք» ՍՊԸ-ի հետ 14.07.2003թ. և 01.08.2003թ., որոնց շրջանակներում հաշվետու տարում կատարվել է 30,891 հազար դրամ վճարում:
- Հայկազ Բախշեցյանի հետ 25.06.2004թ., որի համաձայն ձեռք է բերվել 1308 քառակուսի մետր հողամաս և 767.9 քառակուսի մետր շինություն: Անշարժ գույքի արժեքը կազմել է 152,280 հազար դրամ, որը հաշվետու տարում չի վճարվել:

2005 թ. Ընկերությունը կնքել է

Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) պայմանագիր

- Հայկազ Բախշեցյանի հետ՝ 26.06.2005թ., որի համաձայն ձեռք է բերվել 1500 քառակուսի մետր հողամաս: Հողամասի արժեքը կազմել է 33,750 հազար դրամ, որը հաշվետու տարում չի վճարվել: Մարվել է Հայկազ Բախշեցյանի հետ 25.06.2004թ. կնքված անշարժ գույքի ձեռքբերման պայմանագրի գծով 152,280 հազար դրամ պարտավորությունը:
- Ամատունի Տոնոյանի հետ՝ 23.06.2005թ., որի համաձայն ձեռք է բերվել 1760 քառակուսի մետր հողամաս: Հողամասի արժեքը կազմել է 46,000 հազար դրամ, որը հաշվետու տարում չի վճարվել:
- «Եվրոպրոֆայլ» ՓԲԸ-ի հետ 14.05.2004թ. կնքված պայմանագրի շրջանակներում «Եվրոպրոֆայլ» ՓԲԸ-ի կողմից հաշվետու տարում կատարվել են 548,084 հազար դրամ արժողությամբ աշխատանքներ, վճարումը կազմել է 155,800 հազար դրամ:

¹ 2008 թվականի երկրորդ եռամսյակի փոխկապակցված գործարքների տեսակարար կշիռի հաշվարկման համար հիմք է ընդունվել 2008 թվականի առաջին եռամսյակի ընդհանուր եկամուտները, քանի որ 2008 թվականի II եռամսյակի ֆինանսական հաշվետվությունները, որոնց ներկայացման ժամկետը լրանում է 15.08.2008թ.-ին, ներառված չեն սույն ազդագրում:

- «Կապույտ Երազանք» ՍՊԸ-ի (06.04.2005թ.-ին վերանվանվել է «Էլիտ Սերվիս» ՍՊԸ-ի) հետ 01.12.2004թ. կնքված պայմանագրի շրջանակներում, «Կապույտ Երազանք» ՍՊԸ-ի կողմից հաշվետու տարում մատուցվել են 1,370 հազար դրամ արժողությամբ ծառայություններ, վճարումը կազմել է 1,214 հազար դրամ:
- «Հոթել Ադվերան» ՓԲԸ-ի հետ հաշվետու ժամանակաշրջանում որևէ գործարք չի կատարվել:

Որպես Ընկերության և «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի միջև 19 հուլիսի 2005թ. կնքված վարկային գծի բացման վերաբերյալ լրացուցիչ համաձայնագրի պարտավորությունների կատարման ապահովման երաշխիք գրավադրվել են նաև Հայկազ Բախշեցյանին սեփականության իրավունքով պատկանող 1089.1քառակուսի մետր հողամասը: Սակայն կանոնադրական կապիտալի համալրման ժամանակ Հայկազ Բախշեցյանին պատկանող գույքը գրավից հանվել է և կատարվել է այդ գույքի անվանափոխություն՝ «Էլիտ Գրուպ» ՓԲԸ անունով, իսկ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում գրավադրվել է «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող Բաղրամյան 59 հասցեում գտնվող երկու հողատարածք՝ 0.0864 հա և 0.0856 հա:

Քանի որ 2004թ. և 2005թ. Ընկերություն չի ունեցել իրացում, հետևաբար նաև հասույթ, սույն ժամանակաշրջանի փոխկապակցված գործարքների մասը Ընկերության հասույթի մեջ հնարավոր չէ հաշվարկել:

2006 թ. Ընկերությունը կնքել է

Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) պայմանագիր

- «Եվրոպրոֆայլ» ՓԲԸ-ի հետ 14.05.04թ., որի շրջանակում «Եվրոպրոֆայլ» ՓԲԸ-ի կողմից հաշվետու տարում կատարվել են 339634 հազար դրամ արժողությամբ աշխատանքներ, վճարումը կազմել է 273000 հազար դրամ (տեսակարար կշիռը ընդհանուր եկամուտներում՝ 10.4%):
- «Էլիտ Սերվիս» ՍՊԸ-ի հետ 01.12.2004թ., որի շրջանակում «Էլիտ Սերվիս» ՍՊԸ-ի կողմից հաշվետու տարում մատուցվել են 1166 հազար դրամ արժողությամբ սպասարկման ծառայություններ, վճարումը կազմել է 1162 հազար դրամ (տեսակարար կշիռը ընդհանուր եկամուտներում՝ 0.04%):
- «Հոթել Ադվերան» ՓԲԸ-ի հետ հաշվետու ժամանակաշրջանում որևէ գործարք չի կատարվել:
- Ընկերությունը 09.11.06թ.-ին ընկերության բաժնետեր Արմեն Սկոյանի կնոջ՝ Լարիսա Սկոյանի հետ կնքել է 16900 հազար դրամ արժողությամբ անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր (տեսակարար կշիռը ընդհանուր եկամուտներում՝ 0.52%):

2007 թ. ընթացքում Ընկերությունը կնքել է

Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) գործարքներ

- «Եվրոպրոֆայլ» ՓԲԸ-ի կողմից հաշվետու ժամանակաշրջանում կատարվել են 375704 հազար դրամ արժողությամբ աշխատանքներ (տեսակարար կշիռը ընդհանուր եկամուտներում՝ 103.3%):
- «Էլիտ Սերվիս» ՍՊԸ-ի կողմից հաշվետու տարում մատուցվել են 980 հազար դրամ արժողությամբ սպասարկման ծառայություններ (տեսակարար կշիռը ընդհանուր եկամուտներում՝ 0.36%):

2008 թ. I եռամսյակի ընթացքում Ընկերությունը կնքել է

Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) գործարքներ

- «Եվրոպրոֆայլ» ՓԲԸ-ի կողմից հաշվետու ժամանակաշրջանում կատարվել են 99300 հազար դրամ արժողությամբ աշխատանքներ (տեսակարար կշիռը ընդհանուր եկամուտներում՝ 262.6%): Ընկերության կողմից վճարումը կազմել է 241500 հազար դրամ (տեսակարար կշիռը ընդհանուր եկամուտներում՝ 638.67%):
- «Էլիտ Սերվիս» ՍՊԸ-ի կողմից հաշվետու ժամանակաշրջանում մատուցվել են 452 հազար դրամ արժողությամբ սպասարկման ծառայություններ (տեսակարար կշիռը ընդհանուր եկամուտներում՝ 1.20%): վճարումը կազմել է 482 հազար դրամ (տեսակարար կշիռը ընդհանուր եկամուտներում՝ 1.27%):

2008 թ. II եռամսյակի ընթացքում Ընկերությունը կնքել է

Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) գործարքներ

- «Եվրոպրոֆայլ» ՓԲԸ-ի կողմից կատարվել են 267094 հազար դրամ արժողությամբ աշխատանքներ (տեսակարար կշիռը ընդհանուր եկամուտներում՝ 706.35%): Ընկերության կողմից վճարումը կազմել է 110000 հազար դրամ (տեսակարար կշիռը ընդհանուր եկամուտներում՝ 290.91%):
- «Էլիտ Սերվիս» ՍՊԸ-ի կողմից հաշվետու տարում մատուցվել են 217 հազար դրամ արժողությամբ սպասարկման ծառայություններ (տեսակարար կշիռը ընդհանուր

եկամուտներում՝ 0.57%): վճարումը կազմել է 270 հազար դրամ (տեսակարար կշիռը ընդհանուր եկամուտներում՝ 0.71%):

2008 թվականի հունիսի 16-ին «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ն կնքել է Գույքի վարձակալության պայմանագիր «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ի հետ՝ համաձայն որի Ամիրյան 27 հասցեում գտնվող թիվ 14 գրասենյակը հանձնվել է «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ին վարձակալության ամսական 504.000 ՀՀ դրամով (տեսակարար կշիռը ընդհանուր եկամուտներում կհաշվարկվի 2008 թվականի երրորդ եռամսայից սկսած, քանի որ վարձավճարի հաշվարկը կատարվում է 2008 թվականի հուլիսի 1-ից):

8. Թողարկողի նախատեսվող գործունեությունը և հեռանկարները

Ընկերությունը մտադիր է շարունակել շինարարության ոլորտում իր գործունեությունը: Սակայն հաշվի առնելով անշարժ գույքի շուկայի ներկայիս պահանջները, ընկերությունը մտադիր է իր գործունեությունը ծավալել ոչ միայն բնակարանաշինության էլիտար հատվածում, այլ նաև շինարարություն ծավալել միջին խավի համար՝ այսինքն շահագործման հանձնել ավելի փոքր մակերեսներով և ավելի մատչելի գներով բնակարաններ: Նախատեսվող եկամուտների աղբյուրների մասին կարելի ասել միայն այն, որ Ընկերության ստացվող եկամուտները ինչպես այսօր, այնպես էլ ապագայում կձևավորվեն հիմնականում կառուցվող շենքերի և շինությունների վաճառքներից:

Թողարկողի ֆինանսական վիճակը և գործունեության արդյունքները

1. Ֆինանսական հաշվետվություններ

Ընկերության նախորդ երեք տարիների և 2008 թվականի երկու եռամսյակների ֆինանսական հաշվետվությունները կազմված են գործող պահանջների համապատասխան և ամբողջությամբ ներկայացվել են 11.07.2008 թ-ին ՀՀ ԿԲ ներկայացված առևտրի ազդագրի էջ 32-96-ում:

Միաժամանակ նշենք որ 2005 թվականի գործունեության արդյունքների բացակայությունը պայմանավորված է Ընկերության կողմից նշված ժամանակաշրջանում իրացում չունենալու հետ: Չնայած այն հանգամանքին, որ մինչ որևէ կառույցի վերջնական շահագործման հանձնելը Ընկերությունը գնորդների հետ կնքում է համապատասխան նախնական պայմանագրեր և նրանցից ստանում կանխավճարներ, այնուամենայնիվ դա արտացոլվում է ընկերության գործունեության արդյունքների մեջ, միայն վերջնական պայմանագրերը կնքելուց հետո:

2. Ֆինանսական վիճակի, գործունեության արդյունքների փոփոխությունների վերաբերյալ տեղեկություններ

Ընկերության վերջին երեք տարիների գործունեության արդյունքները, և 2008 թվականի երկրորդ եռամսյակի համար համառոտ, ներկայացված են հետևյալ աղյուսակում՝

Հոդվածի անվանումը	31.12.2005թ. (հազ. դրամ)	մասը հասույթի մեջ (%)	31.12.2006թ. (հազ. դրամ)	մասը հասույթի մեջ (%)	31.12.2007թ. (հազ. դրամ)	մասը հասույթի մեջ (%)	30.06.2008թ (հազ. դրամ).	մասը հասույթի մեջ (%)
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքի, ծառայությունների իրացումից հասույթ	-	-	3,162,077	100%	216,155	100%	869000	100%
Համախառն շահույթ (վնաս)	-	-	269,686	8.5%	118,523	54.8%	228544	26.30%
Գործառնական գործունեությունից շահույթ (վնաս)	-	-	202,977	6.4%	39,501	21.5%	205823	23.69%
Այլ ոչ գործառնական գործունեությունից շահույթ (վնաս)	157,674	100%	84,639	2.7%	130,520	18.7%	19247	2.21%
Գործառնական այլ ծախսեր	(7,770)	5%	(3,343)	0.1%	(16,645)	13.1%	(5057)	0.58%
Չուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	149,904	95%	245,950	7.8%	159,804	35.7%	182890	21.05%


Ընթացիկ ակտիվների իրացվելության գործակիցը. 31.12.2005թ կազմել է **10.91**, 31.12.2006թ.՝ **8.11**, 31.12.2007թ.՝ **9.3**, 31.03.2008թ.՝ **9.9**, 30.06.2008թ.՝ **7.9**:

Ընթացիկ ակտիվները աճելու միտում ունեն, ինչը պայմանավորված է կառուցապատման ծավալների աճով: Ընկերության իրացվելի ակտիվները սեփական են:

Ակտիվների եկամտաբերությունը տոկոսներով ներկայացված է ստորև բերված աղյուսակում.

	31.12.2005թ.	31.12.2006թ.	31.12.2007թ.	30.06.2008
Ակտիվների եկամտաբերությունը	2.07%	3.10%	1.20%	1.06%

Ընկերության 2005-2007թթ և 2008 թվականի երկրորդ եռամսյակի համախառն շահույթը և զուտ շահույթը՝ շահութահարկի գծով ծախսի նվազեցումներից հետո, ներկայացված են հետևյալ գրաֆիկում (հազ.դրամներով)՝



2005 թվականին համախառն շահույթի բացակայությունը պայմանավորված է նրանով, որ ընկերությունը նշված տարիներին չի ունեցել իրացում, քանի որ այդ ժամանակաշրջանում ընկերությունը իրականացրել է շենքերի շինարարությունը, և ստացել է միայն կանխավճարներ: 2007թ. համախառն շահույթի նվազումը, որի հետևանքով նվազել է նաև զուտ շահույթը, պայմանավորված է նույն պատճառով՝ ընկերությունը չի ունեցել նոր շենքերի իրացում, այլ միայն իրացրել է նախկինում իրացված շենքերի չիրացված մասերը և ստացել է միայն կանխավճարներ:

2006 թվականի ընթացքում ընկերությունը իրացրել է 1 բազմաբնակարան շենքի զգալի մասը (մնացած մասը իրացրել է 2007 թվականի և 2008 թվականի առաջին եռամսյակի ընթացքում), որի արդյունքում ընկերության համախառն շահույթը և զուտ շահույթը կարող է աճել են:

3. Ընկերության ֆինանսական գործունեությունը

ա) Ընկերության պարտավորությունները բաղկացած են ընթացիկ և ոչ ընթացիկ պարտավորություններից, որոնց կառուցվածքը հետևյալն է՝

Ոչ ընթացիկ պարտավորություններ.

Հոդվածի անվանումը	31.12.2005թ. (հազ. դրամ)	31.12.2006թ. (հազ. դրամ)	31.12.2007թ. (հազ. դրամ)	30.06.2008թ. (հազ.դրամ)
Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	3,143,020	3,138,087	4,912,885	7,402,699
Հետաձգված հարկային պարտավորություններ	698,812	711,813	974,174	1,130,836
Ընդամենը՝	3,841,832	3,849,900	5,887,059	8,533,535

«Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ» հոդվածում ներկայացված է Կարել Կազիե Ժորիս Անտոնիուսի, Արմեն Սկոյանի, Ամատունի Տոնոյանի, Հայկազ Բախշեցյանի և «Մետեքս» ՓԲԸ-ի հետ կնքված փոխառության պայմանագրերով ստացված գումարները: Համաձայն նշված անձանց հետ կնքված փոխառության պայմանագրերի ընկերությունը իրավունք ունի ժամկետից շուտ իրականացնել փոխառության մասնակի ինչպես նաև ամբողջական մարումներ: Այդպիսի մարումներ ընկերության կողմից մինչ այժմ իրականացվել են և 31.03.2008թ.-ի դրությամբ փոխառությունների մնացորդները ունի հետևյալ տեսքը՝

Սկոյան Արմեն – 2468049072 ՀՀ դրամ
 Տոնոյան Ամատունի - 1259471461 ՀՀ դրամ
 Բախշեցյան Հայկազ - 1183195530 ՀՀ դրամ
 «Մետեքս» ՓԲԸ – 123.385.012 ՀՀ դրամ
 Կարել Կազիե Ժորիս Անտոնիուս – 307239246 ՀՀ դրամ

«Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ» հոդվածում ներկայացված է նաև ընկերության կողմից թողարկված արժեկտրոնային պարտատոսերի գծով պարտավորությունները, որնք կկատարվեն 2010 թվականի փետրվարի 12-ին (պարտատոմսերի մարման օր)

Հետաձգված հարկային պարտավորությունը առաջացել է՝

- հիմնական միջոցների գծով ֆինանսական հաշվառմամբ և հարկային հաշվառմամբ կիրառված տարբեր օգտակար ծառայության ժամկետների հետևանքով.
- Անտոկոս փոխառությունների գեղջման արդյունքում, որոնք հարկային նպատակներով չեն ճանաչվում:
- ընթացիկ պահուստների ձևավորման արդյունքում, որոնք հարկային նպատակներով չեն ճանաչվում:
- Աշխատակիցների՝ հաշվետու տարում չօգտագործված ամենամյա հերթական արձակուրդների գծով

Ընթացիկ պարտավորություններ.

Հոդվածի անվանումը	31.12.2005թ. (հազ. դրամ)	31.12.2006թ. (հազ. դրամ)	31.12.2007թ. (հազ. դրամ)	30.06.2008թ. (հազ.դրամ)
Կարճաժամկետ բանկային վարկեր	260,260	245	494,146	168 388
Կարճաժամկետ փոխառություններ	-	586,061	143.637	112 861
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	89,228	87,705	154,370	859 125
Ստացված ընթացիկ կանխավճարներ	287,807	235,783	415,652	514 009
Կարճաժամկետ կրեդիտորական պարտք բյուջեին	8,411	11,058	981	8 411
Կարճաժամկետ կրեդիտորական պարտք պարտադիր սոցիալական ապահովագրության գծով	-	657	850	1 002
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր մասնակիցներին (հիմնադիրներին)	-	-	-	-
Այլ կրեդիտորական պարտքեր	-	-	6426	5073
Ընդամենը՝	645,706	921,509	1,216,062	1,668,869

Կարճաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ հոդվածում ներկայացված է Կոնվերս Բանկի, Կարել Կազին Ժորիս Անտոնիուսի, «Արարատբանկ» ԲԲԸ-ի և Նորվիկ ՈՒՎԿ-ի հետ կնքված վարկային և փոխառության պայմանագրերով ստացված գումարները:

Կանխավճարներն ամբողջությամբ ստացվել են արտադրանքի վաճառքի գծով:

Կրեդիտորական պարտքը ձևավորվել է հիմնականում շինարարական աշխատանքների կատարման և ձեռքբերված հողի գծով պարտավորություններից:

Կրեդիտորական պարտքերի ըստ հոդվածների տեսակարար կշիռը ընդհանուր կրեդիտորական պարտքերի մեջ հետևյալն է՝

Կրեդիտորական պարտքերի ըստ հոդվածների տեսակարար կշիռը ընդհանուր կրեդիտորական պարտքերի մեջ հետևյալն է՝

Հոդվածի անվանումը	31.12.2005թ.	31.12.2006թ.	31.12.2007թ.	31.03.2008թ.
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	91.39%	88.22%	96,1%	98.34%
Կարճաժամկետ կրեդիտորական պարտք բյուջեին	8.61%	11.12%	0.6%	0.96%
Կարճաժամկետ կրեդիտորական պարտք պարտադիր սոցիալական ապահովագրության գծով	-	0.66%	0.5%	0.11%
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով	-	-	2,8%	0.52%
Այլ կրեդիտորական պարտքեր	-	-	-	0.06%

բ) Ընկերության սեփական կապիտալը 2005 թվականից դեկտեմբերի 31-ից մինչև 2008 թվականի հունիսի 30-ը ունի հետևյալ տեսքը՝

Հողվածի անվանումը	31.12.2005թ. (հազ. դրամ)	31.12.2006թ. (հազ. դրամ)	31.12.2007թ. (հազ. դրամ)	30.06.2008թ. (հազ. դրամ)
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի գուտ գումար	100	100,000	1,792,500	1 792 500
Կուտակված շահույթ (վնաս)	96,197	589,298	703,167	1 069 608
Պահուստային կապիտալ	-	-	268,875	268 875
Սեփական կապիտալ այլ տարրեր	2,657,376	2,461,402	3,421,789	3 859 128
Ընդամենը	2,753,673	3,150,700	6,186,331	6,990,111

2006թ.-ին Ընկերության բաժնետերերի կատարած ներդրումների հաշվին Ընկերության կանոնադրական կապիտալը կազմել է 100.000.000 (մեկ հարյուր միլիոն) ՀՀ դրամ:

2007 թվականի դեկտեմբերին բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ բաժնետոմսերի լրացուցիչ թողարկման և տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալը 100.000.000 ՀՀ դրամից դարձել է 1.792.500.000 ՀՀ դրամ:

Ինչպես երևում է Ընկերության սեփական կապիտալը աճել է, ինչը պայմանավորված է հիմնականում կանոնադրական կապիտալի, կուտակված շահույթի և սեփական կապիտալի այլ տարրերի ավելացումով:

«Սեփական կապիտալի այլ տարրեր» հոդվածում ներկայացվել է բաժնետերերից և նրանց կողմից վերահսկվող կազմակերպություններից ստացված անտոկոս երկարաժամկետ փոխառությունների (բաղադրյալ գործիք) սկզբնական ճանաչումից առաջացած սեփական կապիտալին վերաբերող մասը:

Համաձայն ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության Սկզբնական ճանաչման պահին անտոկոս և ցածր տոկոսադրույքով ստացված ժամկետային փոխառությունների զեղչումից առաջացած տարբերությունը ճանաչվում է որպես սեփական կապիտալի այլ տարր, եթե ֆինանսական պարտավորությունը բաժնետերերի ու նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունների գծով է: Ընկերության հետ փոխկապակցված անձանց հետ կնքված փոխառության պայմանագրերի համաձայն՝ փոխառությունները տրամադրվել են անտոկոս և փոխառության մարման ժամկետ է սահմանվել մինչև 2014 թ. դեկտեմբերի 31-ը: Սկզբնական չափման ժամանակ ստացված փոխառությունների գումարի զեղչումը իրականացվել է 10% տարեկան տոկոսադրույքով: Չեղչումից առաջացած գումարը ճանաչվել է սեփական կապիտալում:

Թողարկողի կառավարման մարմինները և կառավարմանը մասնակցող անձինք

1. Ընդհանուր տեղեկություններ կառավարման մարմինների վերաբերյալ

ա. Ընկերության կառավարման մարմիններն են՝

- Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը,
- Ընկերության գլխավոր տնօրենը
- Ընկերության վերստուգողը:

Ընկերության կառավարման մարմինների կառուցվածքը ըստ ընկերության կանոնադրության ունի հետևյալ տեսքը.

1. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը կառավարման բարձրագույն մարմինն է: Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողով ֆինանսական տարվա ավարտից հետո՝ փետրվար ամսից մինչև հուլիս ամիսը ընկած ժամկետում: Բաժնետերերի տարեկան ժողովից բացի գումարվող ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովները համարվում են արտահերթ: Ընկերության արտահերթ ժողովներ գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար:
2. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի (այսուհետև՝ ժողովի) իրավասությունները՝
 - 1) ընկերության կանոնադրության հաստատումը, դրա մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, ընկերության կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ (մասնակցող ձայների 3/4-ով),
 - 2) ընկերության վերակազմակերպումը (մասնակցող ձայների 3/4-ով),
 - 3) ընկերության լուծարումը (մասնակցող ձայների 3/4-ով, բայց ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից),
 - 4) լուծարային հանձնաժողովի նշանակումը, միջանկյալ, ամփոփիչ և լուծարման հաշվեկշիռների

- հաստատումը (մասնակցող ձայների 3/4-ով).
- 5) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը (մասնակցող ձայների 3/4-ով).
 - 6) խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.
 - 7) բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև ընկերության կողմից ձեռք բերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը (մասնակցող ձայների 3/4-ով, բայց ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից).
 - 8) ընկերության միանձնյա գործադիր մարմնի ձևավորումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը (մասնակցող ձայների 3/4-ով).
 - 9) ժողովի վարման կարգի հաստատումը.
 - 10) հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը.
 - 11) ընկերության վերստուգողի ընտրությունը և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.
 - 12) ընկերության աուդիտը իրականացնող անձի հաստատումը.
 - 13) ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, ինչպես նաև տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը.
 - 14) ընկերության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ՝ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով.
 - 15) ընկերության ղեկավար պաշտոնատար անձանց (խորհրդի անդամների, վերստուգողի և տնօրենի) աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը.
 - 16) ընկերության կողմից դուստր կամ կախյալ ընկերությունների, հողինգային ընկերությունների, առևտրային կազմակերպությունների այլ միությունների ստեղծումը, ինչպես նաև դրանցում մասնակցությունը.
 - 17) ընկերության բաժնետոմսերի կամ բաժնետոմսերի փոխարկվող ընկերության այլ արժեթղթերի ընկերության բաժնետերերի նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը.
 - 18) շահագրգռվածության առկայության դեպքում, գործարքների կնքումը.
 - 19) ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը (մասնակցող ձայների 3/4-ով).
 - 20) բաժնետոմսերի համախմբումը կամ բաժանումը.
 - 21) «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և կանոնադրությամբ սահմանված այլ որոշումների ընդունումը:
3. 2 կետով սահմանված հարցերով որոշումների ընդունումը վերապահվում է ժողովի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել ընկերության խորհրդին կամ գործադիր մարմնին: Ժողովն իրավունք չունի քննարկել և որոշումներ ընդունել այն հարցերի շուրջ, որոնք «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով և կանոնադրությամբ չեն սահմանվել որպես նրա իրավասություն:
 4. Ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող՝ ձայնի իրավունք տվող (քվեարկող) բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, եթե «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և կանոնադրությամբ ձայների ավելի շատ քանակ սահմանված չէ:
 5. Ժողովն իրավունք չունի փոփոխել ժողովի օրակարգը, ինչպես նաև որոշումներ ընդունել օրակարգում չընդգրկված հարցերի վերաբերյալ:
 6. Ժողովի կողմից ընդունված որոշումները, ինչպես նաև քվեարկության արդյունքները որոշում ընդունելու պահից 45 օրվա ընթացքում պետք է ներկայացվեն բաժնետերերին՝ նրանց պատվիրված նամակներ ուղարկելու կամ առձեռն հանձնելու միջոցով:
 7. Ժողովի որոշումները կարող են ընդունվել հեռակա քվեարկությամբ (հարցման միջոցով): Տարեկան ժողովը, ինչպես նաև «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67 հոդվածի 1-ին կետի «ժք» ենթակետով սահմանված դեպքում հրավիրված ժողովը չի կարող անցկացվել հեռակա կարգով քվեարկությամբ: Հեռակա կարգով քվեարկությամբ ընդունված ժողովի որոշումն օրինական ուժ ունի, եթե քվեարկությանը մասնակցել են ընկերության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի կեսից ավելին և որոշումն ընդունվել է 2, 3 և 4 կետերի պահանջներին համապատասխան: Հեռակա կարգով քվեարկության ժամանակ քվեաթերթիկները պետք է տրամադրվեն բաժնետերերին՝ լրացրած քվեաթերթիկները ընկերության կողմից ընդունելը ավարտելու պահից առնվազն 30 օր շուտ:
 8. Ժողովին մասնակցելու իրավունք ունեն ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը (անվանատերերը), իրենց պատկանող բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով: Խորհրդակցական ձայնի իրավունքով ժողովին կարող են մասնակցել նաև ընկերության բաժնետեր չհանդիսացող ընկերության խորհրդի,

- գործադիր մարմնի անդամները, ինչպես նաև ընկերության վերստուգողը և աուդիտն իրականացնող անձը (եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող ժողովի նյութերում):
9. Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվում է Ընկերության խորհրդի կողմից սահմանված տարվա, ամսվա, ամսաթվի դրությամբ՝ Ընկերության բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա: Եթե Ժողովը գումարվում է հեռակա քվեարկությամբ, ապա դրան մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը սահմանվում է ժողովի գումարման ամսաթվից առնվազն 35 օր շուտ:
 10. Ընկերության բաժնետերերը, ինչպես նաև ժողովում խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցելու իրավունք ունեցող անձինք ծանուցվում են ժողովի գումարման մասին՝ նրանց պատվիրված նամակով համապատասխան գրավոր ծանուցում ուղարկելու կամ ծանուցումն առձեռն հանձնելու միջոցով: Ժողովի գումարման մասին գրավոր ծանուցումը պետք է ուղարկվի կամ առձեռն հանձնվի ժողովի գումարման օրվանից առնվազն 2 օր առաջ, եթե օրենքով ավելի երկար ժամկետ սահմանված չէ: Ժողովի մասին ծանուցումը պետք է պարունակի՝
 - 1) ընկերության ֆիրմային անվանումը և գտնվելու վայրը.
 - 2) ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը.
 - 3) ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը.
 - 4) ժողովի օրակարգում ընդգրկված հարցերը.
 - 5) բաժնետերերի ծանոթանալու կարգը ժողովում քննարկվող հարցերին վերաբերող տեղեկություններին և նյութերին, որոնք պետք է ներկայացվեն բաժնետերերին ժողովը նախապատրաստելու ընթացքում:
 11. Ժողովի նախապատրաստման ընթացքում խորհուրդը, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ ժողովը գումարող անձինք որոշում են՝
 - 1) ժողովի գումարման տարին, ամսաթիվը, ժամը և վայրը.
 - 2) ժողովի օրակարգը.
 - 3) ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, քմսաթիվը.
 - 4) ժողովի գումարման մասին բաժնետերերին ծանուցելու կարգը.
 - 5) բաժնետերերին ժողովի նախապատրաստման ընթացքում տրամադրվող տեղեկությունների և նյութերի ցուցակը.
 - 6) քվեաթերթիկների ձևը և բովանդակությունը, եթե քվեարկությունները կատարվելու են քվեաթերթիկներով:
 12. Ընկերության բաժնետերերի արտահերթ ժողովը գումարվում է խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, Ընկերության գործադիր մարմնի, վերստուգողի, Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Ընկերության՝ առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:
 13. Արտահերթ ժողովի գումարման կամ արտահերթ ժողովի գումարումը մերժելու մասին խորհրդի որոշումը պետք է ընդունվի Ընկերության գործադիր մարմնի, վերստուգողի, Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Ընկերության՝ առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջը ներկայացնելու ամսաթվից՝ 10 օրվա ընթացքում: Եթե սահմանված ժամկետում խորհուրդն արտահերթ ժողովի գումարման մասին որոշում չի ընդունում կամ որոշում է ընդունում դրա գումարումը մերժելու մասին, ապա արտահերթ ժողովը կարող են գումարել ժողովի գումարման մասին պահանջը ներկայացրած անձինք:
 14. Եթե Ընկերության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի թիվը գերազանցում է 25-ից, ապա ժողովի որոշմամբ Ընկերությունում ստեղծվում է հաշվիչ հանձնաժողով, որի կազմը չի կարող երեք հոգուց պակաս լինել: Հաշվիչ հանձնաժողովի անդամներ չեն կարող լինել ընկերության խորհրդի անդամները, վերստուգողը, Ընկերության տնօրենը (գլխավոր տնօրենը), ինչպես նաև այն անձինք, որոնք առաջադրված են այդ պաշտոնների թեկնածուներ: Հաշվիչ հանձնաժողովը որոշում է ժողովի քվեումը, ապահովում է քվեարկության սահմանված կարգը, քվեարկության մասնակցելու իրավունքը, իրականացնում է ձայների հաշվարկը, ամփոփում է քվեարկության արդյունքները և կազմում է արձանագրություն և ընկերության արխիվ է փոխանցում քվեաթերթիկները:
 15. Ընկերության բաժնետերը ժողովում մասնակցելու իր իրավունքը կարող է իրականացնել անձամբ կամ լիազորված ներկայացուցչի միջոցով (լիազորագրի առկայության դեպքում):
 16. Ժողովն իրավասու է (քվեում ունի), եթե մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են ընկերության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 50-ից ավելի տոկոսին: Եթե ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը տևում է մեկ օրից ավելի, յուրաքանչյուր օրվա համար կազմվում է ժողովի մասնակիցների գրանցման առանձին ցուցակ:
 17. Քվեումի բացակայության դեպքում հայտարարվում է նոր ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը: Նոր ժողովի գումարման դեպքում օրակարգի փոփոխություն չի թույլատրվում: Չկայացած ժողովի փոխարեն գումարվող նոր ժողովն իրավասու է, եթե մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 30-ից ավելի տոկոսին:

18. Քվեարկությունը ընդհանուր ժողովում իրականացվում է «ընկերության մեկ քվեարկող բաժնետոմս» մեկ ձայն» սկզբունքով, բացառությամբ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված այն դեպքերի, երբ կիրառվում է գումարային քվեարկության սկզբունքը:
19. Ժողովում քվեարկությունները կատարվում են քվեաթերթիկների միջոցով, իսկ մինչև 25 բաժնետեր ունենալու դեպքում՝ առանց քվեաթերթիկների: Եթե քվեարկությունները կատարվել են առանց քվեաթերթիկների, ապա ժողովի արձանագրությունները կարող են ստորագրվել նաև ժողովին մասնակցած բաժնետերերի կողմից:
20. Եթե Ընկերության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի թիվը գերազանցում է 49-ից, ապա ընկերությունում ստեղծվում է խորհուրդ, որն իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և կանոնադրությամբ վերապահված են ժողովի բացառիկ իրավասությանը: Ընկերության բաժնետերերի թիվը 50-ից պակաս լինելու դեպքում, ընկերությունում խորհուրդ չի ստեղծվում, եթե բաժնետերերի ընդհանուր ժողովովն այլ բան չի որոշում: Խորհուրդը չստեղծվելու դեպքում՝
- 1) 21-րդ կետով սահմանված բացառիկ իրավասության ենթակա հարցերը լուծվում են բաժնետերերի ընդհանուր ժողովով՝ ձայների պարզ մեծամասնությամբ, իսկ
 - 2) 11-րդ, 12-րդ, 13-րդ կետերով, 21-րդ կետի 2), 3), 4), 5), 8), և 10) ենթակետերով սահմանված իրավասությունները խորհրդի փոխարեն իրականացնում է ընկերության գործադիր մարմինը:
21. Խորհրդի բացառիկ իրավասությանն են պատկանում՝
- 1) ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը.
 - 2) տարեկան և արտահերթ ժողովների գումարումը, բացառությամբ 13 կետով սահմանված դեպքերի.
 - 3) ժողովների օրակարգի հաստատումը.
 - 4) ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվա, ամսվա, ամսաթվի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը, որոնք կապված են ժողովների նախապատրաստման ու գումարման հետ և վերապահված են խորհրդի իրավասությանը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համապատասխան.
 - 5) 2 կետի 2), 15), 18) և 20) ենթակետերով նախատեսված հարցերի ներկայացումը ժողովի քննարկմանը.
 - 6) գույքի շուկայական արժեքի որոշումը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով.
 - 7) «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով և դեպքերում Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերումը.
 - 8) ընկերության վերատուգողի վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը.
 - 9) ընկերության աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը.
 - 10) ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ ժողովին առաջարկությունների նախապատրաստումը.
 - 11) ընկերության բաժնետոմսերով վճարվող միջանկյալ շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը.
 - 12) ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.
 - 13) ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը.
 - 14) ընկերության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, հիմնարկների ստեղծումը.
 - 15) «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում գործարքների կնքումը.
 - 16) ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը.
 - 17) ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը.
 - 18) ընկերության հաստիքացուցակի հաստատումը,
 - 19) «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և կանոնադրությամբ իր իրավասությանը վերապահված այլ հարցերի լուծումը:
22. Խորհրդի անդամներն ընտրվում են երեք տարի ժամկետով՝ տարեկան ժողովի կամ անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու դեպքում՝ արտահերթ ժողովի կողմից: Խորհրդի ընտրվող անդամների քանակական կազմը սահմանվում է ժողովի որոշմամբ, բայց չի կարող պակաս լինել 3 հոգուց:
23. Ընկերության այն բաժնետերերը, որոնք ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին, իրավունք ունեն առանց ընտրության ընդգրկվել խորհրդի կազմում կամ դրանում նշանակել իրենց ներկայացուցչին: Յուրաքանչյուր բաժնետեր խորհրդում կարող է զբաղեցնել միայն մեկ տեղ: Խորհրդի կազմում ընտրված են համարվում ձայների առավելագույն քանակ ստացած թեկնածուները:
24. Խորհրդի նախագահին ընտրում են խորհրդի անդամները, խորհրդի անդամների կազմից՝ իրենց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Խորհուրդը կարող է ցանկացած ժամանակ վերընտրել նախագահին կամ

- ընտրել նոր նախագահ՝ խորհրդի անդամների ընդհանուր քանակի ձայների մեծամասնությամբ:
 Ընկերության խորհրդի նախագահի և տնօրենի պաշտոնները կարող են համատեղվել:
25. Խորհրդի նախագահը կամ նրա պարտականությունները կատարող խորհրդի անդամը նախագահում է ժողովներում, բացառությամբ ժողովի վարման կարգով նախատեսված դեպքերի:
 26. Խորհրդի նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության, սակայն ոչ պակաս տարին մեկ անգամ՝ խորհրդի նախագահի նախաձեռնությամբ, խորհրդի անդամի, վերստուգողի, գործադիր մարմնի, ընկերության ատոլիտն իրականացնող անձի, ինչպես նաև քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին տիրապետող բաժնետերերի պահանջով:
 27. Խորհրդի նիստերում նախագահում է խորհրդի նախագահը: Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները խորհրդի որոշմամբ կատարում է խորհրդի անդամներից մեկը: Խորհրդի նիստերի քվորումը ապահովվում է, եթե նիստին մասնակցում կամ հեռակա կարգով քվեարկում են խորհրդի անդամների կեսը և ավելին: Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, եթե «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ: Քվեարկության ժամանակ խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի միայն մեկ ձայն: Չայնի կամ քվեարկության իրավունքի փոխանցում չի թույլատրվում: Չայների հավասարության դեպքում խորհրդի նախագահի ձայնը որոշիչ է: Խորհրդի նիստերի գումարման և անցկացման կարգը սահմանվում է ժողովի հաստատած՝ խորհրդի կանոնակարգով:
 28. Եթե խորհրդի անդամների թիվը նվազում է խորհրդի քանակական կազմի 2/3-ից, ապա ընկերությունը պետք է այն լրացնելու նպատակով արտահերթ ժողով գումարի, որի մասին որոշումը կայացնում է խորհուրդը:
 29. Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է ընկերության միանձնյա գործադիր մարմինը՝ գլխավոր տնօրենը (տնօրենը): Ընկերության տնօրենի իրավասությանն են պատկանում ընկերության ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը, բացառությամբ ժողովի և խորհրդի իրավասություն հանդիսացող հարցերի: Ժողովի կողմից ընկերության տնօրենին նշանակելուց հետո, ընկերությունը նրա հետ կնքում է պայմանագիր, որը ընկերության անունից ստորագրում է խորհրդի նախագահը, օրենքով սահմանված դեպքում՝ խորհրդի այլ անդամը, կամ 20-րդ կետով սահմանված դեպքում խորհուրդ չստեղծվելու պարագայում՝ ընկերության բաժնետոմսերի ընդհանուր քանակում ամենամեծ տեսակարար կշիռ ունցող բաժնետերը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ամենամեծ տեսակարար կշիռ ունցող մյուս բաժնետերը:
 30. Ընկերության գլխավոր տնօրենը՝
 - 1) տնօրենում է ընկերության գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում ընկերության անունից.
 - 2) առանց լիազորագրի գործում է ընկերության անունից.
 - 3) ներկայացնում է ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում.
 - 4) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում աշխատանքային.
 - 5) տալիս է լիազորագրեր.
 - 6) բանկերում բացում է ընկերության հաշվարկային (այդ թվում՝ արտարժույթային) և այլ հաշիվներ.
 - 7) խորհրդի, իսկ վեջինիս չստեղծման դեպքում՝ ժողովի հաստատմանն է ներկայացնում ընկերության աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը, ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը.
 - 8) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.
 - 9) օրենքով և կանոնադրությամբ սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում ընկերության աշխատակիցներին, ինչպես նաև աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:
 31. Ընկերության անվանմամբ կլոր կնիքը գտնվում է ընկերության տնօրենի տիրապետման ներքո: Դրա օգտագործման իրավասությունը պատկանում է միայն տնօրենին:
 32. Ընկերության տնօրենն իր պարտականությունների կատարման ընթացքում պետք է գործի ելնելով ընկերության շահերից: Նա պատասխանատվություն է կրում իր գործողությունների (անգործության) հետևանքով ընկերությանը պատճառած վնասի համար:
 33. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ վերահսկողությունը իրականացնում է վերստուգողը, որին ընտրում է ժողովը: Վերստուգող կարող է լինել ընկերության կառավարման մարմիններում չընդգրկված գործունակ ֆիզիկական անձը:
 34. Վերստուգողը հետևում է ընկերության կառավարման մարմինների որոշումների կատարմանը, ստուգում է ընկերության փաստաթղթերի համապատասխանությունը օրենքներին, այլ իրավական ակտերին և կանոնադրությանը: Նա իրավունք ունի իրականացնել ընկերության ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արդյունքների ստուգումը, ստուգել ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը սեփական նախաձեռնությամբ, ժողովի կամ խորհրդի որոշմամբ, ինչպես նաև ընկերության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսի սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով: Ընդ որում, վերստուգողը սեփական նախաձեռնությամբ ստուգումներ կարող է իրականացնել տարեկան ոչ ավելի քան երկու անգամ: Վերստուգողը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է կանոնադրությամբ և ժողովի կողմից հաստատված վերստուգողի կանոնակարգով:

35. Վերստուգողի պահանջով նրան պետք է տրամադրվեն ընկերության ֆինանսատնտեսական գործունեությանը վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, նյութերը և բացատրությունները:
36. Ընկերության տարեկան հաշվեկշռի հաստատման ժամանակ վերստուգողի եզրակացությունը պարտադիր է:
37. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով, բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, ընկերությունը կարող է ներգրավել աուդիտորի:

Ընկերության բաժնետերերի ժողովը հիմք ընդունելով նոր կանոնադրությունը չի ընտրել տնօրենների խորհուրդ, որի իրավասությունները դրվել են համապատասխան կառավարման օդակի վրա, համաձայն ընկերության կանոնադրության:

բ. Տեղեկություններ թողարկողի կառավարմանը մասնակցող յուրաքանչյուր անձի վերաբերյալ

Հ/Հ	Անուն ազգանուն	Բնակության վայրը (հասցեն)	մասնագիտությունը	վերջին 3 տարիներում զբաղեցրած պաշտոնները այդ թվում համատեղությամբ	Ընկերության հասարակ բաժնետոմսերի քանակը
1	Սկոյան Արմեն	Երևան, Գ-այի պողոտա 7/1, բն. 53	Ֆիզիկոս	«Էլիտ Գրուպ» ՓԲԸ Տնօրենների Խորհրդի նախագահ, Այժմ գլխավոր տնօրեն, վերջին 3 տարիների ընթացքում «Փունջ» և «Էլիտ Հոլդինգ» ՍՊԸ-ում զբաղեցրել է տնօրենի պաշտոնը,	1075500 (60%)
2	Ստեփանյան Մարինե	Երևան, Վաղարշ Վաղարշյան 172. բն 9.	Ֆինանսիստ	«Էլիտ Գրուպ» ՓԲԸ Ֆինանսական Տնօրեն, վերջին 3 տարիների ընթացքում հանդիսացել է «Ջերմուկ Ռեզորթ» ՍՊԸ-ի, «Աղվերան Հոթել» ՓԲԸ-ի և «Էլիտ Հոլդինգ» ՍՊԸ-ի ֆինանսական տնօրեն և «Էլիտ Սերվիս» ՍՊԸ-ի հաշվապահ	-
3	Գուկասյան Ալլա	ք.Երևան, Ա.Հովհաննիսյան 22/9	Տնտեսագետ	01.01.2005թ. – 31.03.2007թ - «Էսկուլայ» ՍՊԸ 01.04.2007թ.-ից «Էլիտ Գրուպ» ՓԲԸ Վերստուգող	-

գ) Թողարկողի և թողարկողի կառավարմանը մասնակցող անձանց միջև շահերի բախման դեպքեր չեն եղել:

Թողարկողի հետ փոխկապակցված անձինք, թողարկողի սեփականատերերը

1. Թողարկողի հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ տեղեկություններ

ա. Ընկերության հետ փոխկապակցված ֆիզիկական անձինք են՝ Արմեն Սկոյանը, Ամատունի Տոնոյանը, Հայկազ Բախշեցյանը:

Արմեն Սկոյանը անձնագիր AG02997937, հասցեն՝ ք. Երևան, Գ-այի պողոտա 7/1, բն. 53, վերջին երեք տարիների ընթացքում զբաղեցրել է Ընկերության գլխավոր տնօրենի և Ընկերության խորհրդի նախագահի պաշտոնները, այժմ զբաղեցնում է միայն ընկերության գլխավոր տնօրենի պաշտոնը և տիրապետում է Ընկերության թողարկած 1075500 հատ հասարակ անվանական բաժնետոմսի (60.00%):

Ամատունի Տոնոյանը անձնագիր AG03954342, հասցեն՝ ք. Երևան, Գ-ոգոլի փողոց տուն 14, վերջին երեք տարիների ընթացքում հանդիսացել է Ընկերության խորհրդի անդամ, այժմ հանդիսանում է միայն ընկերության բաժնետեր և տիրապետում է Ընկերության թողարկած 358500 հատ հասարակ անվանական բաժնետոմսի (20.00%):

Հայկազ Բախշեցյանը անձնագիր AG04198680, հասցեն՝ ք. Երևան, Նալբանդյան փողոց 29, բն. 39, վերջին երեք տարիների ընթացքում հանդիսացել է Ընկերության խորհրդի անդամ, այժմ հանդիսանում է միայն ընկերության բաժնետեր և տիրապետում է Ընկերության թողարկած 358500 հատ հասարակ անվանական բաժնետոմսի (20.00%):

բ. Ընկերության հետ փոխկապակցված իրավաբանական անձ են հանդիսանում՝

«Մետեքս» ՓԲԸ-ն, որի բաժնետերեր են հանդիսանում Ամատունի Տոնոյանը (50 %) և Հայկազ Բախշեցյանը (50%), տնօրենը՝ Ամատունի Տոնոյան, որը ազգակցական կապեր չունի Արմեն Սկոյանի և Հայկազ Բախշեցյանի հետ: Ընկերության գտնվելու վայրը՝ ք. Երևան, Կոմիտասի պողոտա 63ա, Արշակունյաց պողոտա 42, պետ.ռեգիստրի գրանցման վկայական- 01Ա032283; 286.120.02621; 22.02.97թ:

«Եվրոպրոֆայլ» ՓԲԸ-ն, որի բաժնետերեր են հանդիսանում Ամատունի Տոնոյանը (30%), Արմեն Սկոյանը (40%) և Հայկազ Բախշեցյանը (30%), գտնվելու վայրը՝ ք. Երևան, Մովսես Խորենացի փ. 2-րդ փակուղի, 26, ընկերության նախագահ՝ Ամատունի Տոնոյան, պետ. ռեգիստրի վկայական 03Ա056051; գրանցված 264.120.05945; 02.10.2002թ.:

«Հոբել Աղվերան» ՓԲԸ-ն՝ 100%-ի բաժնետեր է հանդիսանում Ընկերությունը, ք. Աղվերան, պետ.ռեգիստրի վկայական 03Ա055326; գրանցված 264.120.05856; 16.07.2002թ.: Հասցեն՝ ք. Երևան, Կոմիտասի 63ա

«Ձերմուկ Ռիզորթ» ՍՊԸ-ն, 1/3 բաժնեմասը պատկանում է «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ին: պետ.ռեգիստրի վկայական 03Ա074418; գրանցված 273.110.04439; 24.01.2007թ.: Հասցեն՝ ք. Երևան, Սայաթ-Նովա 15/66:

«Շեն Ջորջիա» -ում՝ 35% բաժնեմասը պատկանում է «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ին:
Վրաստանի Հանրապետություն: Շինարարական ապրանքների արտադրություն և շինարարություն:

Արմեն Սկոյանը հանդիսանում է բաժնետոմսերի խոշոր սեփականատեր նաև մի քանի այլ ընկերություններում հետևաբար այդ ընկերությունները «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ի հետ փոխկապակցված են, քանի որ դրանք գտնվում են ընդհանուր վերահսկողության ներքո: Այդպիսով փոխկապակցված անձինք հետևյալներն են.

«Փունջ» ՍՊԸ – ում 30% բաժնեմասով
պետ. ռեգիստրի վկայական 01Ա002192; գրանցված 264.110.00238, 12.09.1994թ.; Մամիկոնյանց 3/14
հասցեում: VALIO կաթնամթերքի ներկրում և վաճառք: Մանրածախ առևտրի ցանց: DIAGEO ֆիրմայի
խմիչքների ներմուծման միակ ներկայացուցիչը ՀՀ-ում :

«Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ –ում՝ 33.33%
Գրանցված ՀՀ կենտրոնական բանկում՝ գրանցման համարը 6, գրանցման վկայականի համարը՝ 6
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան 0002, Ամիրյան փողոց 27, գրասենյակ 14: Ներդրումային ծառայությունների
մատուցում համաձայն ՆԸ 6 լիցենզիայի, տրված ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

«Հիդրոէներգիա» ՍՊԸ –ում 21% բաժնեմասով
պետ.ռեգիստրի վկայական 01Ա007618, գրանցված 278.110.00490, 04.03.1995թ, Տիգրան Մեծի 37/16:
Հիդրոէներգիայի շինարարություն, էլեկտրաէներգիայի արտադրություն և վաճառք:

«ԷլԷնԷքս» ՍՊԸ –ում – 31,55% բաժնեմասով
պետ.ռեգիստրի վկայական 02Ա049424, գրանցված 264.110.05256, 15.01.2001թ., Կոմիտաս 49:
Հիդրոէներգիայի շինարարություն, էլեկտրաէներգիայի արտադրություն և վաճառք:

«Եվրոպրոֆայլ» - ում 40% բաժնեմասով
պետ.ռեգիստրի վկայական 03Ա056051; գրանցված 264.120.05945; 02.10.2002թ.; Կոմիտաս 63^ա:
REHAU ֆիրմայի պատուհանների և դռների տեղադրում, մոնտաժում; SCHUKO ջեռուցման համակարգի
տեղադրում; կոյուղագծերի մոնտաժում:

«Էլիտ Հոլդինգ» ՍՊԸ-ում - 60% բաժնեմասով՝
պետ.ռեգիստրի վկայական 03Ա054515; գրանցված 264.110.05793; 29.05.2002թ.: Հասցեն՝ ք. Երևան Սայաթ-
Նովա 15/66: Շինարարության կառավարում կապալառուների միջոցով:

Ընկերության հետ փոխկապակցված բալար իրավաբանական անձանց՝ բացառությամբ «Էլիտ Սերվիս» ՍՊԸ-ի, կառավարման մարմինների և Ընկերության կառավարման մարմինների միջև ազգակցական կապեր չկան:

«Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ի հետ փոխկապակցված է նաև «Էլիտ Սերվիս» ՍՊԸ-ն (Տերյան 62^ա, պետ.ռեգիստրի գրանցման վկայական- 02Ա047496; 273.110.02741; 21.03.2000թ), որի 100% բաժնեմասի սեփականատեր Լարիսա Սկոյանը «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ի 60%-ի սեփականատեր Արմեն Սկոյանի կինն է:

2. Թողարկողի նշանակալից, բայց ոչ խոշոր սեփականատերերի վերաբերյալ

ա. Թողարկողի բաժնային արժեթղթերի նշանակալից սեփականատեր հանդիսացող ֆիզիկական անձինք չկան:

բ. Թողարկողի բաժնային արժեթղթերի նշանակալից սեփականատեր հանդիսացող իրավաբանական անձինք չկան:

Թողարկողի կողմից թողարկված արժեթղթերի վերաբերյալ տեղեկություններ

1) Ընկերություն մինչ այժմ թողարկել է սովորական անվանական ոչ փաստաթղթային բաժնետոմսեր, քանակը 1.792.500 հատ, անվանական արժեքը 1.000 ՀՀ դրամ և անվանական, արժեկտրոնային, ոչ փաստաթղթային պարտատոմսեր, որի առաջին տրանշով տեղաբաշխված արժեթղթերի քանակը 131375 հատ է, 1000 ՀՀ դրամ անվանական արժեքով:

2) Ընկերության թողարկված բաժնետոմսերը և պարտատոմսերը դեռևս թույլատրված չեն որևէ կարգավորվող շուկայում առևտրին:

3) Ընկերությունը 2006 թվականի հուլիսին կատարել է սովորական անվանական բաժնետոմսերի լրացուցիչ թողարկում՝ 99900 հատ, 99.900.000 ՀՀ դրամ ընդհանուր անվանական ծավալով: Թողարկված ողջ ծավալով բաժնետոմսերը տեղաբաշխվել են ընկերության բաժնետերերի միջև, որի արդյունքում, ընկերության կանոնադրական կապիտալը կազմել է 100.000.000 ՀՀ դրամ:

2007 թվականի դեկտեմբերի 14-ին կատարել է սովորական անվանական բաժնետոմսերի լրացուցիչ թողարկում՝ 1.692.500 հատ, 1.692.500.000 ՀՀ դրամ ընդհանուր անվանական ծավալով: Թողարկված ողջ ծավալով բաժնետոմսերը մինչև 26.12.2007թ.-ը տեղաբաշխվել են ընկերության բաժնետերերի միջև, որի արդյունքում, ընկերության կանոնադրական կապիտալը կազմել է 1.792.500.000 ՀՀ դրամ:

Ընդ որում համաձայն «Էլիտ Գ-րուպ» ՓԲԸ-ի սովորական անվանական լրացուցիչ բաժնետոմսերի թողարկման, տեղաբաշխման, բաժնետերերի կողմից բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքի իրականացման կարգի և պայմանների հաստատման, ինչպես նաև բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքներով պայմանավորված կանոնադրական կապիտալի ավելացման և կանոնադրության մեջ համապատասխան փոփոխություններ կատարելու մասին հարցը՝ թիվ 14.12.07 որոշման ներդրումները կատարվել են հետևյալ համամասնությամբ՝

- Արմեն Սևոյան՝ 1 015 500 000 ՀՀ դրամ;
- Ամատունի Տոնոյան՝ 338 500 000 ՀՀ դրամ;
- Հայկազ Բախչեցյան՝ անկախ գնահատողի կողմից 338 500 000 ՀՀ դրամ գնահատված, սեփականության իրավունքով իրեն պատկանող հետևյալ անշարժ գույքով՝
 - (1) *ք.Երևան, Կենտրոն Համայնքի Դեմիրճյան 1-ին փակուղի թիվ 1 տուն և 420,1 քմ հողատարածք (Վկայական N1476521, 17.11.2004թ.),*
 - (2) *թիվ 3 տան 339,0 քմ հողամաս (Վկայական N1560530, 18.07.2005թ.) և,*
 - (3) *Դեմիրճյան 5 (Պռոշյան 72) տուն և 330քմ հողատարածք (Վկայական N1803501, 01.04.2004թ.):*

Ընկերության տնօրենների խորհրդի կողմից 2007 թվականի դեկտեմբերի 10-ին որոշում է ընդունվել թողարկել 2000000000 ՀՀ դրամ ընդհանուր անվանական ծավալով 2000000 հատ անվանական արժեկտրոնային, ոչ փաստաթղթային պարտատոմսեր, յուրաքանչյուրը 1000 ՀՀ դրամ անվանական արժեքով:

2007 թվականի դեկտեմբերի 12-ին նույնպես Ընկերության տնօրենների խորհրդի կողմից որոշում է ընդունվել թողարկված պարտատոմսերից առաջին տրանշով տեղաբաշխել 500000 հատ:

Առաջին տրանշի տեղաբաշխման ընթացքում (13.02.2008թ.-12.05.2008թ.) տեղաբաշխվել է 131375000 ՀՀ դրամ անվանական ծավալով 131375 հատ պարտատոմս:

4) Նախկինում թողարկված բաժնետոմսերը ենթակա չեն մարման: Առաջին տրանշով տեղաբաշխված պարտատոմսերը պետք է մարվեն 12.02.2010թ.-ին:

5) Ընկերության յուրաքանչյուր սովորական բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքներ: Սովորական բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերը օրենքի և Ընկերության կանոնադրության համաձայն իրավունք ունի՝

1. մասնակցել ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով.
2. մասնակցել ընկերության կառավարմանը.
3. ստանալ շահութաբաժիններ ընկերության գործունեությունից առաջացած շահույթից.
4. առաջնահերթ կարգով ձեռք բերել ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը.
5. ստանալ ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն (գաղտնի փաստաթղթերից բացի), այդ թվում, ընկերությանը դիմելուց հետո 5-օրյա ժամկետում ստանալ տեղեկություններ, որոնք վերաբերում են հաշվապահական հաշվեկշռին, հաշվետվություններին և ընկերության արտադրատնտեսական գործունեությանը.
6. ժողովում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի.
7. հանդես գալ առաջարկություններով ժողովում.
8. ժողովում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով.
9. դիմել դատարան՝ ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին ու իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով.

10. ընկերության լուծարման դեպքում ստանալ ընկերության գույքի իր հասանելիք մասը.
11. ընկերության միջոցների հաշվին ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման դեպքում անվճար ստանալ համապատասխան քանակությամբ բաժնետոմսեր.
12. ունենալ կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

Ընկերության պարտատոմսերի սեփականատերերն իրավունք ունեն՝ տեղաբաշխման սկզբից հաշված 365 օր հետո, և տեղաբաշխման սկզբից հաշված 730 օր հետո ստանալ վճարվող արժեկտրոնները, դրանց հաշվարկման օրից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Պարտատոմսերի սեփականատերերն իրավունք ունեն պարտատոմսերի մարման օրվանից հաշվարկված երեք աշխատանքային օրվա ընթացքում Ընկերությունից ստանալ պարտատոմսի անվանական արժեքը:

Պարտատոմսերը սահմանված ժամկետում չմարելու դեպքում Ընկերությունը կարող է լուծարվել դատական կարգով: Ընկերության լուծարման դեպքում պարտատոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ծանոթանալ Ընկերության լուծարմանն առնչվող բոլոր փաստաթղթերին: Լուծարման հանձնաժողովը մամուլում հայտարարություն է գետեղում Ընկերության լուծարման և պարտատերերի պահանջների ներկայացման կարգի և ժամկետի մասին: Պարտատերերի կողմից պահանջներ ներկայացնելու ժամկետն ավարտելուց հետո լուծարման հանձնաժողովը կազմում է միջանկյալ լուծարման հաշվեկշիռ, որը տեղեկություններ է պարունակում լուծարվող Ընկերության գույքի կազմի, պարտատերերի ներկայացրած պահանջների ցանկի, ինչպես նաև պահանջների քննարկման արդյունքների մասին: Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի, Ընկերության պարտատերերին վճարումները կատարվում են ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքի 70-րդ հոդվածով սահմանված հերթականությամբ, որի համաձայն Ընկերության կողմից առաջարկվող պարտատոմսերի սեփականատերերի պահանջները բավարարվում են հինգերորդ հերթին: Ընդ որում յուրաքանչյուր հերթի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարելուց հետո: Պարտատոմսերի սեփականատերերը կարող են օգտվել օրենքով և իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներից:

Պարտատոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ինքնուրույնաբար տնօրինել, տիրապետել և օգտագործել իրենց սեփականության ներքո գտնվող պարտատոմսերը: Ընդ որում, պարտատոմսերի վաճառքը կարող է կատարվել ինչպես Հայաստանի ֆոնդային բորսայում, այնպես էլ բորսայից դուրս:

7) ա) Ընկերությունը 2005 և 2006թթ շահաբաժիններ չի վճարել, քանի որ Ընկերության բաժնետերերի ժողովի որոշմամբ ստացված շահույթը ուղղվել է ընկերության գործունեության զարգացմանը: 2007 թվականին ստացված շահույթի բաշխման վերաբերյալ Ընկերության բաժնետերերի ժողովը դեռևս որոշում չի կայացրել:

Ընկերության կոմիտեից թողարկված պարտատոմսերի գծով տոկոսները պետք է վճարվեն 12.02.2009թ. և 12.02.2010թ.-ին:

բ) Ընկերությունը ընթացիկ տարում շահաբաժինների միջանկյալ վճարումներ չի իրականացրել:

7) Թողարկված արժեթղթերի փոխարկման, բաժանման, համախմբման, ձեռքբերման, հետգնման և (կամ) մարման դեպքեր չեն եղել: